



Շվեդիա
Sverige



ԵՎՐԱՍԻԱ
ԿԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՇԻՄԱԴՐԱՄ



Այս հետազոտությունն իրականացվել է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության, Սիդայի աջակցությամբ իրականացվող «Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագրի շրջանակում: Նյութի բովանդակության համար պատասխանատու է միայն ստեղծողը: Հետազոտությունում արտահայտված տեսակետները/ բովանդակությունը կարող է չհամընկել ՄԻԴԱ-յի տեսակետների հետ:

«ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՏԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ»

ծրագրի մշտադիտարկման զեկույց

Իրականացնող՝ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ ՀԿ
Հայաստան-2022

Ներածություն

Այս զեկույցն ամփոփում է «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ԺԱԱ) կողմից Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (այսուհետ՝ ԵՀՀ) եւ Շվեդիայի միջազգային զարգացման գործակալության, Միդայի աջակցությամբ իրականացվող «Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագրի շրջանակում իրականացված դատական աշխատանքի տեխնիկական արդյունավետության մշտադիտարկման արդյունքները:

Ծրագրի անվանումն է «Արդյունավետ դատական արտադրության ապահովում»: Մշտադիտարկումն իրականացվել է 2022թ.-ի մարտ-սեպտեմբեր ամիսների ընթացքում:

Մշտադիտարկման բուն նպատակն էր ուսումնասիրել դատական հաստատությունների եւ փաստաբանական հանրույթի գործունեության նյութատեխնիկական, վարչարարական, աշխատանքային եւ մասնագիտական պայմանները եւ կարիքները, եւ բացահայտել դատարանների հետ առնչվող քաղաքացիների, ինչպես նաեւ մասնագետների կարծիքները այդ եւ մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

Նպատակից ելնելով՝ մշտադիտարկման համար ընտրվել են ուսումնասիրության հետեւյալ ոլորտները.

1. Դատական վարչարարության, դատարանների հասանելիության եւ մատչելիության, դատավորների բարեկրթության եւ մասնագիտական որակների վերաբերյալ դատարաններին առնչվող քաղաքացիների կարծիքները,
2. Դատական շենքերի, շինությունների մատչելիության եւ հասանելիության, պայմանների բարվոքության, անվտանգության, կահավորվածության եւ տեխնիկական հագեցվածության մշտադիտարկում,
3. Հանրային պաշտպանի գրասենյակների նյութատեխնիկական հագեցվածությունը, աշխատանքային պայմանները եւ կարիքները,
4. Դատական համակարգի աշխատանքը վավերագրող www.datalex.am կայքի գործառնության արդյունավետությունը:

Մշտադիտարկման հիման վրա կազմված նախնական զեկույցը մարզերում 4 անգամ քննարկվել է շահագրգիռ խմբերի հետ, որի հիման վրա լրամշակվել է: Այս զեկույցում իշխանություններին եւ մասնագիտացած հանրությանը ներկայացվում են բացահայտված խնդիրները եւ դրանց կարգավորման առաջարկություններ:

Այս զեկույցը կարող է հետաքրքրել արդարադատության ոլորտի խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններին, իրավաբաններին, իրավագետներին, արդարադատության համակարգի աշխատողներին, լրագրողներին եւ դասախոսներին:

Մշտադիտարկման նախապատրաստական աշխատանքներ

Նախապատրաստական փուլում մշտադիտարկման խումբը մշակել է մշտադիտարկման գործիքակազմը, սահմանվել է հարցումների ընտրանքը եւ մշակվել է մշտադիտարկողների վերապատրաստման ուղեցույցը: Որպես դաշտային աշխատանքներին մասնակցող անձինք՝ ընտրվել են ԺԱԱ մարզային քաղաքացիական-երիտասարդական կենտրոնների շահագրգիռ երիտասարդներ: Այնուհետեւ մշտադիտարկման թիմի ղեկավարը եւ իրավախորհրդատուն իրականացրել են եռօրյա վերապատրաստումներ հետեւյալ ենթաթեմաներով.

- Մշտադիտարկման նպատակը, գործիքակազմը եւ ընտրանքը,
- Դիտորդական աշխատանքների իրականացման առանձնահատկությունները,
- Հաղորդակցության հմտություններ եւ էթիկա,
- Դատական համակարգ, դատավորի կարգավիճակ եւ դատական համակարգում առկա խնդիրներ,
- Փաստաբանական գործունեության էությունը,
- Նախկինում իրականացված համանման ուսումնասիրությունների արդյունքներին ծանոթացում

Դասընթացի ընդհանուր տեւողությունը եղել է 3 օր կամ 20 աշխատանքային ժամ:

Մշտադիտարկման քանակական տվյալները հավաքագրվել են հանրության եւ մասնագիտական տարբեր խմբերի շրջանում իրականացված հարցումների միջոցով. դատարանների հետ առնչություն ունեցած քաղաքացիներ՝ հայցվորներ, տուժողներ եւ այլն, նաեւ դատավորներ, դատարաններում աշխատող այլ անձինք, փաստաբաններ, հանրային պաշտպաններ:

Հավաքագրված տվյալները հիմք են հանդիսացել դատական արտադրության համակարգում առկա խնդիրների եւ առավել կարեւոր հարցերի վերհանման եւ բացահայտման համար, եւ ներկայացնում են արդարադատության համակարգից հանրության կարիքներն ու ակնկալիքները:

Հավաքագրված արդյունքները ներկայացվել են առանձին ենթաբաժիններով՝ սույն մեկ հաշվետվության մեջ ամփոփելով քանակական տվյալները:

Քանակական հաշվետվության առանձնահատկություններից մեկն այն է, որ տվյալներ հավաքագրվել են դատաիրավական մարմինների հետ առնչություն ունեցողներից, ովքեր առնչություն ունենալով այդ համակարգի հետ, գործընթացների առնչությամբ ձեւավորել են պատկերացումներ:

Մշտադիտարկման գործիքակազմ

Վերոհիշյալ ոլորտների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն իրականացվել է հետևյալ գործիքակազմի կիրառմամբ՝

1. **Ստանդարտացված հարցումներ.** Ստանդարտացված հարցումների դեպքում հարցերը ձևակերպված են եղել, ինչը թույլ է տալիս ձևավորել ընդհանուր պատկերացումներ հետազոտության խնդրի մասին: Այդ գործիքը կիրառվել է դատարանների հետ առնչություն ունեցող քաղաքացիների, փաստաբանական եւ դատական հանրային ներկայացուցիչների հետ վերոհիշյալ հիմնահարցերը պարզաբանելու նպատակով:

Ընդհանուր առմամբ, մշակվել են հետևյալ թեմաներով ստանդարտացված հարթաթերթեր՝

- Դատարաններին առնչվող քաղաքացիների (ոչ դատավորների) կարծիքների վերաբերյալ հարցաշար,
- Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքային պայմանների գնահատման հարցաշար,
- «ԴատաԼեքս» կայքի արդյունավետության գնահատման հարցաշար

Բոլոր հարցումներն իրականացվել են հանդիպման ձևաչափով:

Հարցումներն իրականացվել են 7 տեսակի հարցաթերթերով՝ նախատեսված տարբեր խմբերի համար: Նմուշները ներկայացված են այս զեկույցի Հավելված 3-ում:

Դիտորդական ստուգաթերթիկներ. Հանրային պաշտպանի գրասենյակների նյութատեխնիկական հագեցվածության մշտադիտարկման, դատական շենքերի, շինությունների մատչելիության եւ հասանելիության, պայմանների բարվոքության, անվտանգության, կահավորվածության եւ տեխնիկական հագեցվածության մշտադիտարկման նպատակով կիրառվել են նաեւ դիտորդական ստուգաթերթիկներ: Դիտորդական ստուգաթերթիկներում ներառված հարցերին ամեն հաստատությունում պատասխանել է երկու դիտորդ: Հակասող պատասխաններ ստանալու դեպքում իրականացվել են լրացուցիչ ճշգրտումներ: Դիտորդների ընտրությունը կատարվել է ծրագրի եւ մարզային համակարգողների կողմից՝ հաշվի առնելով դիտորդի մասնագիտական փորձը եւ դատաիրավական համակարգի վերաբերյալ ընդհանուր գիտելիքները: Հարցերին պատասխանելիս դիտորդները դիմել են Հանրային պաշտպանի գրասենյակների ղեկավարներին եւ դատական հաստատությունների նյութատեխնիկական հարցերով պատասխանատուներին՝ հարցերի լիարժեք պատասխաններն ստանալու նպատակով: «Դիտորդի մեկնաբանություն» բաժինը լրացնելիս, անհրաժեշտության դեպքում, դիտորդը ներկայացրել է իր դիրքորոշումը հիմնավորող փաստեր:

Ընտրանք

Մշտադիտարկման ենթակա մարզերն ընտրվել են սկզբում՝ ծրագրի նախագծման փուլում: Արդյունքում, մշտադիտարկմանը մասնակցել են Շիրակի, Տավուշի, Լոռու, Սյունիքի, Արմավիրի, Վայոց Ձորի մարզերում եւ Երեւանում գործող մասնագիտական եւ առաջին ատյանի դատարանները եւ Հանրային պաշտպանների գրասենյակները:

Ծրագրի ռեսուրսային ապահովությունից եւ դատական համակարգի մշտադիտարկման հետ կապված օբյեկտիվ սահմանափակումներից ելնելով՝ **դատարաններին առնչվող քաղաքացիների կարծիքների ուսումնասիրությունն** իրականացնելիս՝ կիրառվել է տարերային ընտրանքի սկզբունքը՝ հարցումներին ներգրավելով դատական նիստերին մասնակցող տարբեր դատական կարգավիճակ ունեցող քաղաքացիների: Ընդհանուր առմամբ, հարցմանը մասնակցել է 501 քաղաքացի:

Աղյուսակ 1. Գործը քննող դատարանի գտնվելու վայրը եւ հարցվածների թիվը ըստ դատարանների.



Մարզ	Հարցումների թիվ	%
1. Տավուշի մարզ	26	5%
2. Լոռու մարզ	74	15%
3. Շիրակի մարզ	155	31%
4. Սյունիքի մարզ	33	7%
5. Երեւան	87	17%
6. Արմավիրի մարզ	126	25%
Ընդամենը		501

Հարցմանը մասնակցել են հետեւյալ սեռատարիքային խմբերի ներկայացուցիչները.

Աղյուսակ 2. Հարցվողների սեռատարիքային բաշխվածությունը.

Տարիք	Իգական	Արական	Ընդամենը
18-34	84	70	154
35-49	88	73	161
50-64	53	67	317
65+	31	35	68
Ընդամենը	257	245	501

Ստորեւ ներկայացված են նաեւ հարցմանը մասնակցած քաղաքացիների դատական կարգավիճակների եւ գործը քննող դատարանների համամասնությունները: «Այլ» խմբում ներկայացված են պետական հաստատությունների ներկայացուցիչները, որոնք դատարանում հանդես են եկել որպես շահագրգիռ կողմեր, սակայն օրենսգրքով կարգավիճակ չեն ունեցել: Կան հարցաթերթիկներ, որտեղ նշվել է «ՊՆ ներկայացուցիչ», «իրավասու մարմնի ներկայացուցիչ», «օրինական ներկայացուցիչ՝ հաշմանդամ ու անչափահաս, անգործունակ անձանց համար» եւ այլք:



Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքային պայմանների եւ կահավորվածության մշտադիտարկման գործընթացում ներառվել են հետևյալ քաղաքներում տեղակայված Հանրային պաշտպանի գրասենյակները ներկայացնող 9 հանրային պաշտպան եւ 1 մարզային համակարգող:

Աղյուսակ 3. Հանրային պաշտպանի գրասենյակներ.

Մարզ	Քաղաք
Շիրակ	Գյումրի
Տավուշ	Իջևան
Վայոց Ձոր	Եղեգնաձոր
Լոռի	Վանաձոր
Արմավիր	Արմավիր
Սյունիք	Սիսիան

«ԴատաԼեքս» կայքի գործառնության արդյունավետության գնահատման նպատակով հարցումներն իրականացվել են «ԴատաԼեքս» կայքից օգտվող քաղաքացիների շրջանում՝ մեծապես ներառելով առավել ակտիվ օգտատերերին՝ փաստաբաններին եւ հանրային պաշտպաններին:

Ընդհանուր առմամբ, մշտադիտարկմանը մասնակցել է 203 օգտատեր:

Աղյուսակ 4. «ԴատաԼեքս» կայքի մասին հարցման մասնակիցների բաշխվածությունն ըստ դատական կարգավիճակի: Ծանոթություն. Հարցման ընթացքում կար «պետական մեղադրող» եզրույթը:

Հարցվողի դատական կարգավիճակը	#
1. Հայցվոր	30
2. Պատասխանող	22
3. Ամբաստանյալ	2
4. Երրորդ անձ	18
5. Փաստաբան/Հանրային պաշտպան	101
6. Փորձագետ/մասնագետ	1
7. Պետական մեղադրող	3
8. Վկա	2
9. Այլ. ներկայացուցիչներ	24
Ընդամենը	203

Դատարանների կահավորվածության եւ հարմարավետության դիտորդական աշխատանքներն իրականացվել են հետևյալ դատարաններում.

Աղյուսակ 5. Դատական ատյաններ.

Մարզ	Քաղաք	Դատական ատյան
Տավուշ	Իջեւան	Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան
	Դիլիջան	Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան
Արմավիր	Էջմիածին	Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան
	Արմավիր	Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան
Շիրակ	Գյումրի	Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան
Շիրակ	Գյումրի	Վարչական դատարան
Շիրակ	Մարալիկ	Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան
Սյունիք	Սիսիան	Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան
Սյունիք	Գորիս	Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան

Լոռի	Սպիտակ	Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան
	Վանաձոր	Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան
Երևան	Երևան	Վերաքննիչ դատարան
	Երևան	Սնանկության
	Երևան	Վարչական դատարան
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան

Մշտադիտարկման սկզբունքները

- Հարցումներն իրականացվել են՝ հիմնվելով անձի տվյալների գաղտնիությունը պահելու եւ անանոնության սկզբունքի վրա: Հարցումների ժամանակ չեն հավաքագրվել անձնական բնույթի տվյալներ: Հարցումներն անստորագիր են իրականացվել: Պահանջվել է միայն հարցվողի հեռախոսահամարը՝ որակի ստուգման նպատակով հետադարձ զանգեր կատարելու նպատակով:
- Մշտադիտարկման արդյունքների անաչառությունը բացատրվում է հիմնվում է բացառապես գիտական սկզբունքների վրա հիմնված լինելու հանգամանքով:
- Հարցման արդյունքում հետադարձ զանգերի միջոցով իրականացվել է որակի ստուգում: Մշտադիտարկման ընթացքում նշանակվել է որակի ստուգման պատասխանատու, ով հետադարձ զանգեր է կատարել մոտ 30 տոկոս հարցման մասնակիցների շրջանում:

Մշտադիտարկման սահմանափակումներ

Մշտադիտարկման սկզբում հարցումները պատշաճ կազմակերպելու համար ծրագրի ղեկավարը՝ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լ. Բարսեղյանը երկու նամակ/հարցում է հղել ՀՀ արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանին եւ ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանին: Հարցումների սկզբում ներկայացվել է ծրագիրը եւ ծրագրի նպատակները: Նամակները ներկայացված են Հավելված 1-ում եւ հավելված-2-ում:

ՀՀ արդարադատության նախարարից եւ փաստաբանական պալատի նախագահից ստացվել են պատասխանները եւ ուսումնասիրվել են դրանք:

Տեղեկության հարցումից բացի, ծրագրի ղեկավարը նամակով դիմել է ՀՀ արդարադատության նախարարին, որում, բացատրելով ծրագրի նպատակը, տեղեկացրել է, որ մշտադիտարկման բարեհաջող իրականացման համար ակնկալվում է նախարարության աջակցությունը համապատասխան հանձնարարականների տեսքով՝ ծրագրի շրջանակներում թիրախ տարածքներում (Շիրակ, Լոռի, Տավուշ, Սյունիք, Վայոց Ձոր, Արմավիր մարզեր եւ Երևան քաղաք) արդարադատության համակարգի տեխնիկական բաղադրիչի խնդիրների առանց խոչընդոտի մշտադիտարկման համար:

Չնայած ներդրված ջանքերին, հարցումներն իրականացնելիս դիտարկվող դատարաններում դատավորների եւ դատարանի աշխատակազմի կողմից խիստ բացասական վերաբերմունք է եղել հարցում իրականացնող օպերատորների նկատմամբ: Չնայած մշտադիտարկման նպատակների մասին հետեւողական բացատրություններին,

դատավորների ճնշող մեծամասնությունը՝ 29-ից 25-ը հրաժարվել է պատասխանել այս մոնիթորինգի շրջանակներում իրականացվող անստորագիր եւ անանուն հարցումներին, ինչը հնարավորություն չի տալիս ունենալ դատարանների գործունեության տեխնիկական պայմանների մասին դատավորների, դատարանի աշխատակազմի՝ դատավորի օգնականի, գործավարի եւ օգնականի կարծիքները, ամփոփել դրանք եւ ձեւավորել որակյալ գնահատական այդ խմբից: Այս արձագանքից դատելով կարելի է եզրակացնել, որ դիտարկված դատարաններում դատավորները հիմնականում գոհ են իրենց աշխատանքային պայմաններից եւ չունեն աշխատանքին առնչվող որեւէ խնդիր, որի մասին կուզեին հաղորդել հետազոտող թիմին:

1. ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հայաստանում իշխանությունների տարանջատման սկզբունքի կիրառման արդյունքում ձեւավորված իշխանությունների երեք ճյուղերից թերեւս դատական իշխանության նկատմամբ վերաբերմունքով է պայմանավորված երկրում մարդու իրավունքների լիարժեք սպասարկումը եւ իրականացումը, երաշխիքների ապահովումը, արդարադատության կայացումը: Այս ոլորտի պատշաճ գործարկումը մարդու իրավունքների ապահովման եւ կենսագործունեության լավագույն միջոցն է:

Քաղաքացիների՝ դատաիրավական համակարգի հետ առնչվելու փորձը եւ դրա արդյունքում ձեւավորված վերաբերմունքը չափազանց կարեւոր են դատաիրավական համակարգի արդյունավետ գործառնության համար:

Դատարանների հետ առնչվող քաղաքացիների կարծիքների եւ ընկալումների մշտադիտարկման ժամանակ ուսումնասիրվել են հետեւյալ հիմնական հարցերը.

- դատավորների եւ դատարանի աշխատակազմի աշխատանքային որակների եւ մասնագիտական կարողությունների վերաբերյալ քաղաքացիների ընկալումները,
- դատավորների եւ դատարանի աշխատակազմի աշխատանքային որակների եւ մասնագիտական կարողությունների վերաբերյալ մասնագիտական հանրային վերաբերմունքն ու մոտեցումները,
- արդարադատության համակարգի նկատմամբ քաղաքացիների տրամադրվածությունը,
- դատարան դիմելու ընթացակարգի եւ ծախսերի վերաբերյալ հանրային կարծիքները,
- դատական գործընթացի կազմակերպման արդյունավետության հետ կապված հանրային կարծիքները,
- դատարանների մատչելիության եւ հասանելիության հիմնախնդիրը

Նշված հարցերը հնարավորություն են տվել անդրադառնալ արդարադատության արտադրության առավել անհատական եւ ոչ ինստիտուցիոնալ քանակական հատկանիշներին: Այս մոնիթորինգի համար թիրախային են եղել արդարադատության արտադրության այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են կառավարումը, ղեկավարումը եւ այլն:


Դատավորների եւ օժանդակող անձնակազմի աշխատանքային որակների եւ մասնագիտական կարողությունների գնահատում

Չնայած ընդունված պատկերացումներին՝ դատաիրավական համակարգի նկատմամբ հանրային տիրույթում գերակշռող բացասական տրամադրվածությանը, այս մշտադիտարկման արդյունքները հանրային գնահատականների առումով արձանագրում են առավելապես դրական արդյունքներ՝ դատավորների եւ օժանդակող անձնակազմի աշխատանքային որակների եւ մասնագիտական կարողությունների վերաբերյալ:

Միաժամանակ հատկանշական է, որ բացասական վերաբերմունք ունեցող որոշ քաղաքացիներ եւ մասնագետներ այսօրինակ հետազոտություններն ու ուսումնասիրությունները հարցազրույցի ժամանակ համարել են անիմաստ: Այդ եւ այն

պատճառով, որ արդարադատությունից իրենց փորձով դժգոհ են մնացել, հարցերին գրեթե չեն պատասխանել, իսկ համաձայնելու դեպքում, հարցերի կեսին պատասխանելուց հետո հրաժարվել են պատասխանել մյուս կեսին: Ոմանք հրաժարվել են հարցման վերջում այն բանից հետո, երբ նրանց խնդրել են հարցման որակի ստուգման համար հեռախոսահամար տալ, պայմանով, որ այն չի հրապարակվի կամ փոխանցվի այլ անձի: Հրաժարվողների փոխարեն հարցվել են այլ անձինք: Ամփոփումները բերվել են ընդհանուր առմամբ 501 հարցվողի կարծիքների հանրագումարից:

Ընդհանուր առմամբ, հարցվող քաղաքացիների գրեթե կեսը լիովին բավարարված է դատավորների եւ դատական կազմի այնպիսի մասնագիտական որակներից, ինչպիսիք են օրինակ, դատավորների եւ դատական կազմի չեզոքությունը, ազնվությունը եւ անկողմնակալությունը (45%), բարեկրթությունը եւ բարիդրացիականությունը (54%), զսպվածությունը եւ զգացմունքային կայությունը (55%) (տե՛ս Գծապատկեր 3-ը):




Չնայած տեսանելի դրական միտումներին՝ գծապատկերում կարելի է տեսնել, որ բոլոր հատկանիշների վերաբերյալ տրվել են նաեւ ոչ բավարար գնահատականներ: Մասնավորապես, նկատելի է, որ քաղաքացիները դժգոհել են դատավորների/դատական կազմի աշխատանքի արագությունից եւ խոսքի բարդությունից: Աշխատանքի արագության մասով ոչ բավարար գնահատականների համագումարը կազմել է 21%, իսկ խոսքի պարզության հատկանիշի մասով՝ համապատասխանաբար 13%-ը գնահատել է դատավորի խոսքը ոչ բավարար պարզ:

Արդարադատության համակարգի ընդհանուր գնահատանք

Արդարադատության համակարգի վերաբերյալ հանրային ընկալումների ուսումնասիրությունը ընդարձակ հետազոտության առարկա է եւ պահանջում է մեթոդաբանական այլ մոտեցումների եւ գործիքակազմի կիրառում: Սույն մշտադիտարկման շրջանակներում մենք անդրադարձել ենք միայն արդարադատության համակարգի մի շարք հատկանիշներին վերաբերող ընթացիկ գործերի քննության առնչությամբ կայացված միջանկյալ ակտերի եւ վճիռների մասով քաղաքացիների դիրքորոշումներին:

Նախ եւ առաջ, եթե համեմատենք չորս հատկանիշների արտահայտման մակարդակները, կնկատենք, որ քաղաքացիների մոտ 1/3-ը, հիմնականում համաձայն են, որ միջանկյալ դատական ակտերը եւ վճիռները հասկանալի են (36%), անաչառ են (36%), խնդիր լուծող են (32%), պատճառաբանված եւ հիմնավորված են (32%) (տե՛ս Գծապատկեր 4-ը):

Հարցվածների տեսակետները մանրամասնելու արդյունքում պարզ դարձավ, որ քաղաքացիները դիմում են փաստաբաններին դատավորի այս կամ այն որոշումը կամ խոսքը մեկնաբանելու՝ իրենց համար հասկանալի դարձնելու համար: Այսինքն՝ գործով փաստաբանը բացի խորհրդատվական աշխատանքից նաեւ բացատրական եւ ուսուցողական աշխատանք է իրականացնում, հատկապես, որ գործող օրենսդրությամբ վճռի/որոշման պարզաբանում չի նախատեսվում:




Նույնանման են նաեւ դատարանների թափանցիկության եւ արդյունավետ գործունեությանը վերաբերող պատասխանները: Հարցվողների 38%-ը հիմնականում համաձայն է, որ դատարանները գործում են թափանցիկ, գրեթե նույն համամասնությունը (39%) համարում է, որ դատարանները տեխնիկական իմաստով գործում են արդյունավետ:


Այդուհանդերձ, հարցվողների մոտավորապես 12% եւ 14%-ը, դատարանները չեն համարում թափանցիկ եւ արդյունավետ (տե՛ս Գծապատկերներ 5-ը եւ 6-ը):

Դատարաններ դիմելու ընթացակարգեր եւ ծախսեր

Միջազգային փորձը փաստում է, որ դատարաններ դիմելու քաղաքացիների պատրաստակամությունը մեծապես պայմանավորված է դատական վարչարարության կազմակերպման արդյունավետությամբ: Այս մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել են դատարանների հետ առնչություն ունեցող քաղաքացիների վերաբերմունքը դատարաններ դիմելու ընթացակարգերի, ծախսերի եւ բուն դատական գործընթացի կազմակերպման վերաբերյալ: Դատարաններ դիմելու ընթացակարգերի եւ ծախսերի վերաբերյալ ստացված արդյունքներից կարելի է բացահայտել, որ այդ հիմնահարցերի որոշ հատկանիշների մասով քաղաքացիների կարծիքները գրեթե բեւեռացված են: Մասնավորապես, պետական տուրքի վճարման չափի եւ փաստաբանի վարձավճարի հետ առնչություն ունեցած քաղաքացիների հակադիր կարծիքները (պատասխանների համագումարը) գրեթե համաչափ են: Պետական տուրքի վճարման չափը բարձր եւ շատ բարձր է համարում քաղաքացիների 33%-ը, իսկ ցածր եւ շատ ցածր՝ քաղաքացիների 29%-ը:




Գծ. 6. Դատարանի գործունեության արդյունավետությունը



Սույն կարծիքը մանրամասնելու արդյունքում ակնհայտ է դառնում, որ այն քաղաքացիները, ովքեր հիմնականում պետական տուրքի չափը ցածր են համարում, դատարան են դիմել մինչև «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի փոփոխությունը, երբ պետական տուրքի չափը 5 անգամ մեծացել է, իսկ առանձնացումը՝ հատուկ կամ հայցային վարույթների՝ վերացել: Փաստաբանի վարձավճարը ցածր է, շատ ցածր է համարում քաղաքացիների 25%-ը, մինչդեռ քաղաքացիների 27%-ը հակառակ կարծիքի է: Փաստաբանի ծառայությունների վճարների մասին կարծիքների բեկեռացումը հնարավոր է բացատրել նաև այն հանգամանքով, որ ինչքան մարզը մոտ է մայրաքաղաքին, այնքան ծառայության արժեքը մեծ է: Չնայած Փաստաբանների Պալատի կողմից սահմանվել է գնացուցակ, սակայն որոշ մարզերում առկա սոցիալական, աղքատության, գործազրկության մակարդակը էլ այլ հանգամանքների խիստ տարբեր վիճակների պատճառով՝ այն հնարավոր չէ կիրառել միատեսակ:

Միաժամանակ, ընդգծենք, որ այս հատկանիշների մասով բավականին բարձր է «չեմ առնչվել» պատասխանողների տեսակարար կշիռը՝ երկու հատկանիշների դեպքում էլ հասնելով պատասխանողների 1/3-ին: Եղել են պատասխանողներ, որոնք տուրքին չեն առնչվել կամ կարող էին առնչվել դատական ակտ կայացնելուց հետո միայն: Առանձնակի ուշադրություն կուզենայինք սեւեռել դատարաններ դիմելու ընթացակարգի հետ կապված տեղեկության հասանելիություն հարցին: Ստացված արդյունքները փաստում են, որ քաղաքացիների գերակշիռ մասը՝ 79%-ը (հիմնականում ցածր էլ շատ ցածր պատասխանների համագումարը) ցածր է գնահատում ընթացակարգերի հետ կապված տեղեկատվության հասանելիությունը, նաև մեծ է քաղաքացիների դժգոհությունը ծանուցագրերի ուղարկման գործընթացից (70%) (տե՛ս Գծապատկեր 7-ը): Ըստ հարցվածներից մի քանիսի մեկնաբանությունների, փաստաբանի ծառայության բարձր արժեքի պատճառով անձինք հրաժարվել են փաստաբանի ծառայություններից և ինքնուրույն են առնչվել դատական համակարգին:

Գծ. 7. Դատարաններ դիմելու ընթացակարգեր եւ ծախսեր



Բուն դատական գործընթաց


Դատական գործընթացի արդյունավետության գնահատումը ներառել է հետևյալ հարցերը.

- դատական ծանուցումների եւ դատական նիստերի միջեւ ժամանակային ընդմիջումները,
- դատական նիստերի՝ ժամանակին սկսելը,
- դատական նիստերի վարման կարգը,
- դատական գործի քննության ողջամիտ ժամկետները:

Մշտադիտարկման արդյունքում ստացված տվյալները վկայում են, որ հարցման մասնակիցների մոտավորապես կեսը, հիմնականում, բավարար է համարում դատական գործընթացի կազմակերպումը վերոհիշյալ բոլոր հարցերի առումով:

Սակայն, հարցվողների 12%-ին հիմնականում չի բավարարում նաեւ դատական ծանուցումների եւ դատական նիստերի միջեւ ժամանակային ընդմիջումները, իսկ հարցվողների գրեթե նույն համամասնությունը՝ 11%-ը, անբավարար է համարում դատական նիստերի ժամանակին սկսելը (տե՛ս Գծապատկեր 8):

Գծ. 8. Դատական գործընթաց



Քաղաքացիների 31%-ը (լիովին կամ հիմնականում անբավարար պատասխանների համագումարը) անբավարար է համարում դատական գործի քննության ժամկետի ողջամտությունը: Ընդ որում, հարցվողների մոտ 47%-ի համոզմամբ՝ դատական գործի տեւողությունը չպետք է գերազանցի մեկ տարին (տե՛ս Գծապատկեր 9): Ըստ որոշ պատասխանների, կողմը հրաժարվել է գործընթացն ավարտին հասցնել, քանի որ իրադրություն է փոխվել:


Այս բաժնում հատկանշական է, որ էականորեն տարբերվում են քրեական և քաղաքացիական գործերով քննության նիստերը ժամանակին սկսելու խնդիրները:

1. Քրեական գործի քննության ուշացումների պատճառները.

- կալանավորին քրեակատարողական հիմնարկից ուշացումով բերելը,
- փաստաբանի ուշացումը նիստից,
- դատավորի ուշ ներկայանալը նիստին: Հաճախ դա պայմանավորված է նախորդ նիստի նախատեսված տեւողության գերազանցմամբ,
- դատախազի ուշանալը կամ բացակայությունը նիստից,
- գործի քննությանն առնչվող մասնագետների (թարգմանիչ, հոգեբան, բժիշկ և այլն) ուշացումները:


2. Քաղաքացիական գործերով քննության ուշացումների պատճառները.

- ✓ որոշ դատավորներ նիստին նախորդող գործով նիստի ժամանակն են սխալ հաշվարկում պլանավորելիս հաջորդ նիստի սկիզբը, արդյունքում ուշ են ներկայանում դատական նիստին,
- ✓ մասնագետների ուշացումներ. թարգմանիչ, հոգեբան, բժիշկ,
- ✓ երբորդ կողմի ներկայացուցիչների ուշացումները:




Հետաքրքիր է տեսնել նաեւ, որ դատարանների հետ առնչվող հարցվողների մոտավորապէս կեսի (46%) համար (մեկ շաբաթից եւ մեկ ամսից պատասխանների համագումարը) դատարաններում գործի քննությունը սկսելու ենթադրվող (ընդունելի) ցանկալի ժամկետը չպետք է գերազանցի մեկ ամիսը: Քաղաքացիների 5%-ը կարծում է, որ գործի քննությունը պետք է սկսել 5 օրվա ընթացքում (տե՛ս Գծապատկեր 10-ը):

ԳՃ. 10. Դատարաններում գործի քննությունը սկսելու ենթադրվող/ընդունելի/ցանկալի ժամկետները



Մշտադիտարկման ընթացքում պարզվել է նաև, թե հիմնականում ինչ եղանակով են քաղաքացիները ստացել դատական նիստ(եր)ի օր(եր)ի եւ ժամ(եր)ի վերաբերյալ ծանուցում(ներ)ը: Ինչպես երեւում է գծապատկերից, գերակշիռ մեծամասնությունը՝ 70%-ը, ծանուցվել է թղթային ֆորմալ նամակագրությամբ, 15%-ին տեղեկացել են նաև հեռախոսի միջոցով, «Դատալեքս» կայքի միջոցով ծանուցվել է քաղաքացիների ընդամենը 2%-ը (տե՛ս Գծապատկեր 11):


ԳՃ. 11. Ի՞նչ եղանակով եք հիմնականում ստացել դատական նիստ(եր)ի օր(եր)ի եւ ժամ(եր)ի վերաբերյալ ծանուցում(ներ)ը: (հնարավոր է մի քանի տարբերակ)



Դատարանի հասանելիությունը եւ մատչելիությունը


Դատարանի հեռավորությունը քաղաքացու փաստացի բնակության վայրից կարելու գործոն է քաղաքացու՝ դատական ատյան դիմելու որոշման կայացման գործում: Այդ նպատակով պարզեցինք, թե որքա՞ն է գործը քննող դատարանի հեռավորությունը քաղաքացու բնակավայրից: Հարցվողների 40%-ը հայտնել է, որ դատարանի հեռավորությունը բնակության վայրից չի գերազանցել 5 կմ (Գծապատկերում՝ 1-ին եւ 2-րդ պատասխանների համագումարը՝ 16% + 24%), հարցված քաղաքացիների 18%-ը արձանագրել է, որ դատարանը գտնվում է 6-ից 10 կմ հեռավորության վրա, 15%-ը նշել է, որ հեռավորությունը եղել է 11-ից 20 կմ, իսկ 22%-ը հայտնել է, որ հեռավորությունը եղել է 21 եւ ավելի կմ:

Դիտարկվող դատարանների ընտրանքը կազմելիս որոշվել է կենտրոնանալ մարզկենտրոնների դատարանների վրա, քանի որ դրանք են հիմնականում ծանրաբեռնված, նաեւ հաշվի է առնվել այն հանգամանքը, որ դատարանի նախագահի նստավայրը մարզկենտրոնի դատական շենքում է: Մյուս քաղաքների դատավորները հիմնականում հաճախակի փոփոխվում են, երբեմն դեպքեր կարող են լինել, որ անհրաժեշտ ժամկետում ոչ մարզկենտրոն դատարանում դատավոր նշանակված չլինի, այդ դեպքում գործ(եր)ը վերաբաշխվում է(են) մարզկենտրոն: Դիտարկված դատարանների ցանկը ներկայացված է 7-րդ էջում, տես 5-րդ աղյուսակը:




Միեւնույն ժամանակ, կարելի է նկատել, որ հարցվողների գերակշիռ մասի (85%) գնահատմամբ, իր բնակավայրից դեպի դատարան հասնող տրանսպորտային միջոցների հասանելիությունը գնահատում է որոշ չափով կամ լիովին հասանելի: Մինչդեռ, 13%-ը տրանսպորտի հասանելիությունը գնահատում է ոչ բավարար (տե՛ս Գծապատկեր 13):

Գծ. 13. Դատարանի հասանելու համար տրանսպորտի հասանելիությունը




Դատարանների հասանելիությունը գնահատելիս կարեւորվել է նաև դեպի դատարանի շենք տանող կողմնորոշիչ ցուցանակների տեսանելիության խնդիրը եւ դատարանի գրասենյակի գտնվելու վայրի վերաբերյալ ուղեցույցի հասանելիությունը: Ըստ հարցման արդյունքների՝ կողմնորոշիչ ցուցանակները անտեսանելի է համարել հարցվողների 24%-ը (Գծապատկերում 1-ին եւ 2-րդ պատասխանների համագումարը՝ 16% + 8%), հարցվողների գրեթե նույն համամասնությունը (23%) անհասանելի է համարել դատարանի գրասենյակը գտնելու վերաբերյալ ուղեցույցը (տե՛ս Գծապատկեր 14, 15):

Գծ. 15. Դատարանի գրասենյակը գտնելու վերաբերյալ ուղեցույցի հասանելիություն



Դատարանների հետ առնչություն ունեցող հարցված քաղաքացիների կարծիքով, հաշմանդամություն ունեցող մարդկանց դատարանի շենք մուտք գործելը հասանելի է միայն որոշ չափով կամ առհասարակ հասանելի չէ, 42% (1, 2, 3 պատասխանների համագումարը): Պետք է նաեւ արձանագրենք, որ, գործող օրենսդրության համաձայն, հաշմանդամություն ունեցող անձանց օրենքով պարտադիր անվճար փաստաբան է տրամադրվում, ինչը կարող է հիմք հանդիսանալ հաշմանդամություն ունեցող անձանց դատարան չներկայանալուն: Ամեն դեպքում, դատարանների շենքերում հարմարությունների բացակայության պատճառով դատավորը, ում վարույթում նման անձ է ներգրավված, փորձում է առավելագույնս հարմարվել՝ փոխելով դատական նիստի դահլիճը, ինչպես նաեւ սահմանվում են արտագնա դատական նիստեր: Այստեղ ակնհայտ է կարծիքի բացակայության պարագայում առաջարկվող պատասխանների տեսակարար կշռի բարձր լինելու փաստ, ինչը կարող է պայմանավորված լինել խնդիրը չկրող անձանց շրջանում այս հարցի վերաբերյալ դիրքորոշման բացակայությամբ (տե՛ս գծապատկեր 16-ը):



Դատարաններին առնչվող հարցված քաղաքացիների սոցիալական պատկերի ամփոփիչ տվյալները ներկայացված են հավելված 5-ում:

2. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄՇՏԱՐԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հանրային պաշտպանի գրասենյակները ստեղծվել ու գործում են «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) հիման վրա: Բացի օրենքից, գործում է նաև ներքին կանոնակարգ (այսուհետ՝ Կանոնակարգ), որը սահմանում է գրասենյակի գործունեության հիմունքները, ինչպես նաև հանրային պաշտպանների աշխատանքի կազմակերպման հետ կապված հարաբերությունները¹:

Հանրային պաշտպանի գրասենյակի Կանոնակարգի 7-րդ գլխով սահմանվում են «Գրասենյակի կառուցվածքը եւ ղեկավարումը» Ըստ դրա՝ Գրասենյակը կազմված է Գրասենյակի ղեկավարից, տեղակալից (տեղակալներից), հանրային պաշտպաններից եւ օժանդակ անձնակազմից: Գրասենյակի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Պալատի նախագահն անձամբ եւ/կամ Գրասենյակի ղեկավարի, Պալատի նախագահի տեղակալի, ֆինանսական տնօրենի կամ աշխատակազմի ղեկավարի միջոցով՝ վերջիններիս օրենքով եւ/կամ Պալատի ներքին իրավական ակտերով տրված լիազորությունների սահմաններում:

Առկա են Հանրային պաշտպանների գրասենյակների հետեւյալ նստավայրեր՝ Աբովյանի, Ալավերդու, Աշտարակի, Արմավիրի, Արտաշատի, Գավառի, Գյումրիի, Գորիսի, Դիլիջանի, Եղեգնաձորի, Եղվարդի, Երեւանի, Էջմիածնի, Իջևանի, Կապանի, Հրազդանի, Սեւանի, Վանաձորի եւ Վարդենիսի:

Մարզային հանրային պաշտպանների քանակ որեւէ իրավական ակտով չի սահմանվում, այն սահմանվում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում Պալատի նախագահի իրավական ակտերով:

Ըստ Կանոնակարգի՝ Հանրային պաշտպանների համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ երկու հանգստյան օրով: Հանրային պաշտպանների աշխատանքի ռեժիմը սահմանում է Պալատի նախագահը: Նույն կարգով նաև գործերի բաշխվածությունը սահմանում է Պալատի նախագահը: Հանրային պաշտպանների աշխատանքի նկատմամբ հսկողություն են իրականացնում գրասենյակի ղեկավարը (տեղակալը), իսկ հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության նկատմամբ վերահսկողություն է իրականացնում ՀՀ փաստաբանների պալատի նախագահը (տեղակալը): Փաստաբանները որպես հանրային պաշտպան աշխատանքի են ընդունվում մրցույթային ընթացակարգի արդյունքներով եւ վարձատրվում են ՀՀ փաստաբանների պալատին ՀՀ պետական բյուջեից հատուկ այդ նպատակով տրամադրվող միջոցներով:

Հանրային պաշտպանի գրասենյակը ՀՀ փաստաբանների պալատի կազմում գործող կառուցվածքային ստորաբաժանում է, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում անձանց տրամադրում է անվճար իրավաբանական օգնություն՝ իրականացնում է հանրային պաշտպանություն: Իրավաբանական օգնությունը տրամադրվում է գրասենյակում աշխատող փաստաբանների՝ հանրային պաշտպանների միջոցով:

Անվճար իրավաբանական օգնությունը ներառում է՝

- 1) խորհրդատվությունը՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների եւ այլ իրավաբանական բնույթի դատավարական փաստաթղթերի կազմում, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում:
- 2) ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը՝ քրեական, քաղաքացիական, վարչական եւ սահմանադրական գործերով:


¹ https://advocates.am/images/khorhrdi_voroshumner/2018/13-15_HPG_kanonakarg_04.07.2018.pdf

Հանրային պաշտպանի գրասենյակի (ՀՊԳ) աշխատանքային պայմանների ուսումնասիրության նպատակով Հայաստանի 6 մարզերի եւ Երեւանի Հանրային պաշտպանի գրասենյակներում անցկացվել են հարցումներ եւ դիտորդական աշխատանքներ՝ պարզելու հանրային պաշտպանների աշխատանքային պայմաններին առնչվող առկա խնդիրները: Հարցվել է 15 հոգի: Մասնավորապես, մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրվել են հետևյալ հարցերը.

- հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածության եւ աշխատավարձի խնդիրները,
- մասնագիտական կարողությունների զարգացման հնարավորությունները եւ կարիքները,
- Հանրային պաշտպանի գրասենյակի կահավորվածության հարցը:

Հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածության եւ աշխատավարձի չափը

Հարցման արդյունքների համաձայն՝ Հանրային պաշտպանի մարզային գրասենյակները գործում են հիմնականում ծանրաբեռնված ռեժիմով: Հարցվողներից 6-ը համարում են, որ վերջին մեկ տարվա ընթացքում Հանրային պաշտպանի գրասենյակները խիստ ծանրաբեռնված են աշխատում. հարցվողների 1/3-ը համարում է, որ ՀՊԳ-ները որոշ չափով են ծանրաբեռնված, եւ միայն մեկ անձ է նշել, որ գրասենյակը, հիմնականում, ծանրաբեռնված չի աշխատում (տե՛ս Գծապատկեր 17):




Այն հարցին, թե որոնք են, ըստ նրանց, աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառները, հարցվողները հիմնականում հնչեցրել են պատասխաններ հետևյալ ձեւակերպումներով.

- հանցանքների մեծ թիվը,
- գրասենյակում ոչ բավարար քանակի աշխատակիցների առկայությունը,
- դիմողները առաջացնում են խոչընդոտներ, երբ դժգոհ են մնում գործի ընթացքից կամ արդյունքից. եթե դատարանը մերժում է կամ կայացվում է ոչ քաղաքացու օգտին դատական ակտ, քաղաքացիները բողոքում են հանրային պաշտպանների դեմ, ինչի արդյունքում հարուցվում է վարչական վարույթ: Ինքնին, հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության հետ զուգահեռ նման վարույթների քննությունը խոչընդոտներ է ստեղծում գործերի վարման արագության համար:


Հանրային պաշտպանի գրասենյակներում ներգրավված ոչ բավարար աշխատակիցների թվի մասին են վկայում նաև հարցման արդյունքները: Ստացված պատկերը վերահաստատում է, որ հանրային պաշտպանների գերակշիռ մեծամասնությանը (8-ը 10-ից)՝ չի գոհացնում ՀՊ գրասենյակների աշխատանքներում ներգրավված աշխատակիցների թիվը:

Մասնավորապես, ըստ հարցվողների, անհրաժեշտ է ավելացնել հանրային պաշտպանների եւ օգնականների թիվը (Գծապատկեր 18): Այսպիսով, ամեն մարզում հասցնելով հանրային պաշտպանների թիվը միջին հաշվով 7-ի, իսկ օգնականների թիվը՝ ամեն հանրային պաշտպանի հաշվով միջին հաշվով՝ 2-ականի (տե՛ս հավելված 3, աղյուսակ 2-ը):



Ստացված արդյունքներից կարելի է նաև եզրակացնել, որ հանրային պաշտպանների մեծամասնությանը չի գոհացնում ներկայիս աշխատավարձի չափը: Ընդ որում, աշխատավարձի չափը խիստ անբավարար են համարում հարցմանը մասնակցած հանրային պաշտպաններից 4-ը, իսկ հիմնականում անբավարար են համարում՝ 2-ը: Գծապատկերից կարելի է նաև նկատել, որ հարցման բոլոր մասնակիցները միակարծիք են, որ հանրային պաշտպանների աշխատավարձը պետք է գերազանցի 150.000 դրամը: Աշխատավարձի չափի վերաբերյալ հարցվողների պատասխանները գրեթե համաչափ են բաշխվել. հարցվողների գրեթե 1/3-ը համարում է, որ աշխատավարձը պետք է կազմի 300000-ից 500000 դրամ, իսկ մյուս 1/3-ը համարում է, որ աշխատավարձը պետք է լինի 500000-ից մինչև 1 մլն դրամ (տե՛ս Գծապատկերներ 19, Գծապատկեր 20):

Գծ. 19. Օգտագործելով 1-ից 4 բալանոց սանդղակ՝ գնահատեք Ձեր բավարարվածության աստիճանը Ձեր ներկայիս աշխատավարձի չափով (հարցվածների թվից):




Գծ. 20. Եթե ընդհանուր առմամբ բավարարված չեք Ձեր աշխատավարձով, ապա ասացեք, ինդրեմ, որքա՞ն պետք է կազմի Ձեր աշխատավարձը կատարած աշխատանքի դիմաց (հարցվածների թվից):




Մասնագիտական կարողությունների զարգացման հնարավորությունները եւ կարիքները

Հանրային պաշտպանների հետ հարցման արդյունքներում մատնանշվել են նաև հարցվողների մասնագիտական կարողությունների կարիքները: Նկատենք, որ, չնայած հարցման մասնակիցներից 7-ը այս տարի են մասնակցել մասնագիտական կարողությունների զարգացման դասընթացներին, իսկ 2-ը՝ 1-2 տարի առաջ, բոլոր 9-ը մասնակիցները արձանագրել են, որ ներկայումս ունեն մասնագիտական կարողությունների զարգացման կարիք (տե՛ս Գծապատկերներ 21-ը եւ 22-ը): Մասնավորապես, ըստ հանրային պաշտպանների, ցանկալի կլինեք մասնակցել անգլերեն լեզվի դասընթացների եւ մշտապես հնարավորություն ունենալ մասնագիտանալ օրենսդրական նոր փոփոխությունների հետ կապված հարցերում:

Գծ. 21. Ե՞րբ եք վերջին անգամ մասնակցել մասնագիտական կարողությունների զարգացման դասընթացի (հարցվածների թվից)



Գծ. 22. Արդյո՞ք ներկայումս ունեք մասնագիտական կարողությունների զարգացման կարիք (հարցվածների թվից)



Հանրային պաշտպանի գրասենյակի կահավորվածությունը. Դիտարկման արդյունքներ.

Հանրային պաշտպանի գրասենյակի կահավորվածության գնահատման նպատակով իրականացվել են դիտորդական աշխատանքներ Շիրակի, Սյունիքի, Վայոց Ձորի, Լոռու, Տավուշի, Արմավիրի Հանրային պաշտպանի գրասենյակներում:

Յուրաքանչյուր մարզային գրասենյակում իրականացվել է մեկ դիտարկում, որի արդյունքները գրանցվել են դիտորդական ստուգաթերթիկներում: Դիտորդական գործընթացին օժանդակել են գրասենյակի պատասխանատուները:

Ստորև ներկայացված են ստացված արդյունքների ընդհանրացված պատկերը, վերլուծությունը:

Պաշտպանի առանձնասենյակի առկայություն. Ըստ դիտարկման արդյունքների՝ պաշտոնական առանձնասենյակ առկա է 8-ից 4 մարզային հանրային պաշտպանի գրասենյակներում: Պաշտոնական առանձնասենյակները բացակայում են Սյունիքի, Վայոց Ձորի, Լոռու (ք. Սպիտակ) եւ Արմավիրի Հանրային պաշտպանի գրասենյակներում: Այդ

մարզերում հանրային պաշտպանները աշխատում են իրենց գրասենյակներում՝ սեփական նախաձեռնությամբ վարձակալած կամ սեփական տարածքներում:

Մասնագիտական գրադարան. Մասնագիտական գրադարանի առկայություն արձանագրվել է 8-ից 3 հանրային պաշտպանի մարզային գրասենյակներում: Մասնագիտական գրադարաններ չկան Սյունիքի (Սիսիանի եւ Գորիսի), Վայոց Ձորի, Լոռու (Վանաձորի եւ Սպիտակի) Հանրային պաշտպանի գրասենյակներում:

Անհրաժեշտ քանակությամբ համակարգիչներ եւ տպիչներ. Գրասենյակներում անհրաժեշտ քանակով համակարգիչների եւ տպիչների առկայության փաստն արձանագրվել է միայն 8-ից 3 Հանրային պաշտպանների մարզային գրասենյակներում: Աշխատակիցների թվին համապատասխան անհրաժեշտ քանակի համակարգիչներ եւ տպիչների չլինելու փաստ արձանագրվել է Սյունիքի (Սիսիան եւ Գորիս), Լոռու (Վանաձորի եւ Սպիտակի) եւ Արմավիրի (ք. Արմավիր) Հանրային պաշտպանների գրասենյակներում:

Օդափոխման եւ ջեռուցման համակարգեր. Սյունիքի (Սիսիան եւ Գորիս), Լոռու (Վանաձորի եւ Սպիտակի), Արմավիրի, Վայոց Ձորի Հանրային պաշտպանի գրասենյակներում առկա չեն օդափոխման համակարգեր: Սյունիքում գործող երկու, ինչպես նաեւ Արմավիրի (ք. Արմավիր) ՀՊ գրասենյակներում նաեւ տեղադրված չեն ջեռուցման համակարգեր:

Սանիտարահիգիենիկ անհրաժեշտ պարագաներով հագեցած սանհանգույց. Սյունիքի (Սիսիան եւ Գորիս), Լոռու (Վանաձորի եւ Սպիտակի), Արմավիրի եւ Վայոց Ձորի ՀՊ գրասենյակներում սանհանգույցին հատկացված չեն եղել պատշաճ կամ համապատասխան տարածքներ եւ առկա հարմարությունները եւս չեն համապատասխանել պահանջվող սանիտարահիգիենիկ նորմերին:

Հանրային պաշտպանի գրասենյակներին վերաբերվող հարցումների ավելի մանրամասն պատկերը ներկայացված է այս զեկույցի Հավելված 4-ում:

3. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Սահմանված չափորոշիչների համապատասխան՝ դատարանների կահավորումը եւ անվտանգության համակարգի ներդրումը, արդյունավետ դատավարության կարեւորագույն գործոններից են: Դատարանների կահավորվածության եւ անվտանգության մշտադիտարկում իրականացնելու նպատակով մշակվել է դիտորդական ստուգաթերթիկ, որում ներառված հարցերը ձեւակերպվել են՝ հաշվի առնելով ոլորտը կարգավորող ինչպես ներպետական, այնպես էլ՝ միջազգային չափորոշիչները: Դատարանների կահավորվածության հարցի շրջանակներում ուսումնասիրվել են նաեւ դատարանների տեսանելիության, մատչելիության եւ հասանելիության խնդիրները: Մշտադիտարկումն իրականացվել է Երեւանում եւ Հայաստանի 6 մարզերում գործող 16 դատարաններում:

Ստորեւ ներկայացված են դատարանների համապատասխանության արդյունքները պահանջվող չափորոշիչներին:

Ընդունելության եւ տեղեկատվության կենտրոն. Արդյունքների համաձայն՝ Ընդունելության եւ տեղեկատվական կենտրոն առկա է դիտարկված 16 դատարաններից 13-ում: Ընդունելության եւ տեղեկատվական կենտրոնները բացակայում են Սիսիանի եւ Մարալիկի առաջին ատյանի, ինչպես նաեւ՝ Երեւանի վերաքննիչ դատարաններում:

Սպասասենյակ. Սպասասենյակների բացակայություն արձանագրվել է Սիսիանի, Վանաձորի, Երեւանի վարչական եւ սնանկության դատարաններում: Մարալիկի առաջին ատյանի դատարանում որպես սպասասենյակ օգտագործվում է ընդհանուր սրահը 6 եւ 17 մետր չափսերով (մոտ 100 քմ), 3-ական 2 աթոռախմբերով: Սպասասենյակ է համարվում նաեւ գրասենյակի տարածքից շարժական պատով առանձնացված, 1մ լայնքով հատվածը՝ առանց աթոռի, մեկ սեղանով: Սպիտակի առաջին ատյանի դատարանում, դիտորդի մեկնաբանությամբ, չնայած կա առանձնացված սպասասենյակ, սակայն դուռը փակ է եւ քաղաքացիները ստիպված են դրսում սպասել:

Դատավորի առանձնասենյակ եւ հանդերձարան. Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ դատավորի առանձնասենյակ եւ հանդերձարան չկան Արմավիր քաղաքի առաջին ատյանի դատարանում: Հանդերձարան չկա նաեւ Մարալիկի, Սիսիանի առաջին ատյանի եւ Երեւանի վարչական, սնանկության եւ վերաքննիչ դատարաններում:

Նիստերի ձայնագրման սարքեր. Գրեթե բոլոր դատարանների նիստերի սենյակներում առկա են նիստերը ձայնագրող սարքեր: Այդ սարքավորումներն առկա չեն եղել միայն Դիլիջան քաղաքի առաջին ատյանի դատարանում:

Փակ ավտոկայանատեղի. Փակ ավտոկայանատեղիները բացակայում են Սիսիանի, Դիլիջանի, Վանաձորի, Գյումրու, Մարալիկի դատարաններում: Գյումրու առաջին ատյանի դատարանի մուտքի մոտ կա ավտոմեքենաների համար սահմանված գոտի, որը, սակայն, փակ չէ:

Մարալիկի առաջին ատյանի դատարանում կա բաց ավտոկայանատեղի՝ առանց վերնածածկի: Ըստ դիտորդի մեկնաբանության.

«Ամբաստանյալը կարող է այդ տարածքի վրա բացվող պատուհանից փախուստ կատարել: Ավագ կարգադրիչն էլ համաձայնեց, որ սահմանափակող կառույցների ավելացման կարիք կա»:

Համակարգիչներ եւ տպիչներ. Ըստ դիտարկումներից ստացված արդյունքների, դատարանների գերակշիռ մասն ունի աշխատակիցների թվին համապատասխան համակարգիչներ եւ տպիչներ: Այդ խնդիրը կարգավորված չէ միայն Եղեգնաձորի եւ Սիսիանի առաջին ատյանի դատարաններում:

Նիստերի ժամանակացույցի տեղեկատվական վահանակներ. Ուսումնասիրված 16-ից 4 մարզային առաջին ատյանի դատարաններում չկան նիստերի ժամանակացույցի տեղեկատվական վահանակներ: Դրանց բացակայության մասին նշել են Սիսիանի, Մարալիկի, Էջմիածնի եւ Սպիտակի առաջին ատյանի դատարաններում: Մարալիկի առաջին ատյանի դատարանի մասով դիտորդի կողմից արվել են հետեւյալ մեկնաբանությունները. «Ընդհանրապես, որեւէ վահանակ չկա, բացի «Փաստաբան» եւ «Դատախազ» ցուցանակներից: Դատարան այցելած քաղաքացին ինքնուրույն չի կարող տեղեկանալ, թե, ասենք, 1-ին ու 2-րդ սենյակներն ի՞նչ սենյակներ են, դատական նիստը փա՞կ է, թե՞ բաց: Ցերեկը լուսավոր սրահում լույսերն անխնա միացված էին»:

Օդափոխության եւ ջեռուցման համակարգեր. Ստացված արդյունքները փաստում են, որ որոշ դատարաններում բացակայում են ջեռուցման եւ/կամ օդափոխության համակարգերը: Այսպիսով, օդափոխության համակարգի բացակայություն արձանագրվել է Սիսիանի, Մարալիկի եւ Սպիտակի առաջին ատյանի եւ Երեւանի վարչական դատարաններում: Սիսիան եւ Սպիտակի դատարաններում բացակայում են նաեւ ջեռուցման համակարգերը:

Ճաշարան. Ստացված արդյունքների համաձայն՝ 16-ից 14 դատական շենքերում ճաշարաններ չկան: Դատարանների ներսում ճաշարանների առկայության փաստ արձանագրվել է Եղեգնաձորի, Մարալիկի, Իջեւանի, Վանաձորի առաջին ատյանի դատարաններում: Մակայն, ըստ դիտորդի, չնայած Վանաձորի դատարանի շենքում գործում է ճաշարան, այն գտնվում է ոչ բարվոք վիճակում: Դատարանի շենքում ճաշարան ունենալու առանձնահատուկ կարեւորության մասին հայտնել են Երեւանի վարչական դատարանում՝ հիմնավորելով իրենց կարծիքը դատարանի՝ սննդի օբյեկտներից հեռու գտնվելու տեղանքով:

Դատական սենյակների քարտեզ. Դատական սենյակների քարտեզներ չկան Երեւանի՝ մշտադիտարկման ենթարկված բոլոր տեսակի դատարաններում, Սիսիանի, Մարալիկի, Սպիտակի, Էջմիածնի եւ Արմավիրի դատարաններում: Մարալիկի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում, ըստ դիտորդի նշումների, դատական սենյակների քարտեզը փոխարինվել է անվտանգության հսկիչ կետով, այն իմաստով, որ տարածքում կողմնորոշվելու, գրասենյակի եւ սանհանգույցի սենյակների տեղերի մասին տեղեկություններ եւ թույլտվություն պետք է ստանալ սպասարկող կարգադրիչից:


Սանհանգույց եւ անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պարագաներ. Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ որոշ դատարանների սանհանգույցներ չունեն էկոլոգիապես մաքուր տարածք, մաքուր չեն եւ հագեցած չեն սանիտարահիգիենիկ պարագաներով: Այսպես, այդ խնդիրները նկատելի են եղել Սիսիանի, Էջմիածնի, Սպիտակի առաջին ատյանի, ինչպես նաեւ Երեւանի վերաքննիչ եւ վարչական դատարանների սանհանգույցների դիտարկման պարագայում:

Նիստերի ժամանակացույց. Ստացված արդյունքները վկայում են, որ գրեթե բոլոր դատարանների քարտուղարություններում հնարավոր է ծանոթանալ հաջորդ օրվա նիստերի ժամանակացույցին: Այդ հնարավորությունները բացակայում են միայն Սիսիանի եւ Մարալիկի դատարաններում:


Դատարանների գտնվելու վայրը. Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ դատարանների մեծամասնությունը գտնվում է առանձնացված շինություններում: Միայն Սիսիանի առաջին ատյանի առանձնացված շինությունում չի գործում: Երեւանի Վերաքննիչ դատարանի շինությունում գործում են երկու տարբեր դատարաններ:

Հակահրդեհային վահանակներ եւ տարհանման պլան. Ստացված դիտարկման արդյունքները վկայում են, որ որոշ դատարաններում չկան անգամ հակահրդեհային վահանակներ եւ տարհանման պլաններ: Այդ խնդիրները արձանագրվել են Միսիանի, Էջմիածնի, Արմավիրի, Մարալիկի, Սպիտակի առաջին ատյանի դատարաններում եւ Երեւանի վերաքննիչ եւ վարչական դատարաններում: Սպիտակի եւ Արմավիրի առաջին դատարաններում բացակայում էր միայն տարհանման պլանը:

Վերանորոգում եւ կահավորում. Գծապատկերներում կարելի է տեսնել, որ վերջին երեք տարիների ընթացքում (23 գծապատկերում առաջին երեք պատասխանների հանրագումարը՝ 3+3+1) վերանորոգվել է ընդամենը 7, իսկ կահավորվել է 8 դատարան: Առավելապես բարվոք վիճակում գտնվող դատարանների թվում են Գորիսի, Մարալիկի, Դիլիջանի, Վանաձորի, Էջմիածնի առաջին ատյանի եւ Երեւանի վերաքննիչ, վարչական եւ սնանկության դատարանները: Վատթարագույն պայմանները գրանցվել են Միսիանի, Սպիտակի առաջին ատյանի դատարաններում: Միսիանի դատարանը չի վերանորոգվել խորհրդային տարիներից ի վեր: Սպիտակի դատարանի շինությունը կառուցվել է կապիտալ վերանորոգվել է տասը տարի առաջ, բայց 4 տարի առաջ հրդեհի հետեւանքով մի քանի սենյակ վնասվել էր եւ այդ սենյակները կրկին վերանորոգվել են: Էջմիածնի դատարանում, հուլիս ամսվա դրությամբ, մասնակի վերանորոգում էր ընթանում, միաժամանակ երկրորդ հարկում էլ դատական նիստեր էին կայանում (Տես Գծապատկերներ 23-ը եւ 24-ը):




Գծ 24. Ե՞րբ է վերջին անգամ կահավորվել դատարանը:



Դատարանների տեսանելիություն, մատչելիություն և հասանելիություն


Տարբերվող վահանակ/գրություն դատարանի շենքի վրա. Գծապատկերից կարելի է տեսնել, որ դատարանների գերակշիռ մասի վրա առկա է կամ տեսանելի է տարբերվող վահանակ կամ որևէ գրություն: Այդպիսի վահանակներ բացակայում են Սիսիանի առաջին ատյանի և Երեւանի վարչական դատարանի շենքերի վրա: Մշտադիտարկման արդյունքում պարզ դարձավ, որ դեպի դատարանների շենքերը ուղղորդող կողմնորոշիչ ցուցանակներն առկա են կամ տեսանելի են միայն 16-ից 10 դատարանների դեպքում: Դրանք առկա է/կամ տեսանելի չեն Սիսիանի, Գորիսի, Սպիտակի, Դիլիջանի, Երեւանի Սնանկության և Վերաքննիչ դատարանների պարագայում (Տես գծապատկեր 25):

Գծ. 25. Արդյո՞ք դատարանի շենքի վրա առկա է/տեսանելի է տարբերակող վահանակ կամ որևէ գրություն:




Մուտքի հարմարեցում հաշմանդամություն ունեցող անձանց համար. Հաշմանդամություն ունեցող մարդկանց համար մուտքն անհասանելի է 16-ից 7 դատարաններում: Այդ դատարաններն են Սիսիանի, Գորիսի, Սպիտակի, Դիլիջանի առաջին ատյանի

դատարանները եւ Երեւանի վարչական, վերաքննիչ եւ սնանկության դատարանները (Տես՝ գծապատկեր 26):



Նիստերի անցկացման վայրի, ժամի վերաբերյալ տեղեկատվությունը: Մշտադիտարկման արդյունքներն արձանագրում են, որ նիստերի անցկացման վայրի, ժամի վերաբերյալ տեղեկատվությունը բավականաչափ հասանելի է դատարանի ներսում: Այդ տեղեկատվության ոչ բավարար չափով հասանելիության մասին դիտորդները տվյալներ են արձանագրել Սիսիանի եւ Մարալիկի առաջին ատյանի դատարաններում (Տես՝ գծապատկեր 27):



Դատական համակարգի անվտանգություն

Դատական համակարգի անվտանգության վերաբերյալ դիտարկումները իրականացվել են Մարալիկի, Իջեւանի, Սպիտակի, Արմավիրի, Էջմիածնի, Վանաձորի առաջին ատյանի եւ Երեւանի վերաքննիչ եւ վարչական դատարաններում:

Այդ դատարաններում մուտքը հիմնականում վերահսկվում է հսկիչների/կարգադրիչների միջոցով: Ներս մտնելուց ստուգվում է անձի ինքնությունը՝ հիմնականում անձնագրային տվյալների ներկայացման միջոցով: Բոլոր վերոթվարկյալ դատարաններում, բացի Երեւանի վարչական դատարանից, անվտանգության համակարգում կիրառվում է մետաղական իրերի բացահայտման սարք: Վանաձորի, Էջմիածնի, Իջեւանի, եւ Երեւանի վերաքննիչ դատարան հնարավոր չէ մուտք գործել առանց այդ սարքով զննություն անցնելու: Բոլոր վերոնշյալ դատարաններում դատավորը անվտանգության նկատառումներով հնարավորություն ունի մուտք գործել նիստերի դահլիճ առանձնացված մուտքով:

4. ԴԱՏԱԼԵՔՍ ԿԱՅՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ


ԴատաԼեքս (datalex.am) կայքը էլեկտրոնային կառավարման եւ տեղեկությունների տրամադրման հանրային տեղեկատվական համակարգ է, որը հնարավորություն է տալիս իրական ռեժիմում ստանալ տեղեկություններ բոլոր դատարաններում քննվող գործերի մասին: ԴատաԼեքս կայքի միջոցով քաղաքացիները, այդ թվում դատարանների հետ առնչություն ունեցող մասնագետները, կարող են տեղեկանալ դատական նիստերի անցկացման ամսաթվի, ժամի եւ վայրի մասին, փնտրել որոշակի գործոններով իրար նման դատական գործերի ընթացքի եւ դատական որոշումների մասին տեղեկատվություն, ուղարկել դիմումներ եւ լրացնել էլեկտրոնային հայցադիմումներ: Այն, ներառելով դատական ոլորտի վերաբերյալ հսկայական տեղեկատվական բազա, նպատակ ունի առավել արդյունավետ դարձնել քաղաքացի եւ դատարան փոխհարաբերությունները: Կայքն ունի յոթ հիմնական բաժին, ինչպես նաեւ հետադարձ կապի հնարավորություն, որի միջոցով քաղաքացիները կարող են ներկայացնել կայքի վերաբերյալ իրենց հարցերը, դիտողությունները եւ առաջարկությունները:

ԴատաԼեքս կայքի արդյունավետության գնահատման նպատակով ուսումնասիրվել են կայքի գործածության հետևյալ հատկանիշները.

- կայքի օգտագործման նպատակները քաղաքացիների կողմից,
- կայքի գլխավոր էջին տեղադրված կայքի քարտեզը/ուղղորդող համակարգի մատչելիությունը,
- կայքում ներբեռնվող տեղեկատվության օգտակարությունը,
- կայքի գործառնության արագությունը,
- էլեկտրոնային հայցադիմումներ ներկայացնելու ընթացակարգի պարզությունը եւ արագությունը,
- դիմումները առցանց ուղարկելու ընթացակարգի պարզությունը եւ արագությունը,
- թարմացվող տեղեկատվության արդիականությունը,
- որոնողական համակարգի հեշտությունը,
- հետադարձ կապի արդյունավետությունը,
- դատական նիստերի ժամանակացույցի վերաբերյալ տրամադրվող, ծանուցումները:

Կայքի օգտագործման նպատակները եւ գործառնության արագությունը. Կայքի օգտագործման նպատակները բազմազան են քաղաքացիների կողմից: Այն հարցին, թե ինչ նպատակով էք օգտագործում ԴատաԼեքս կայքը, հարցվողների մեծամասնությունը մեկնաբանել է, որ կայքը օգտագործում է վճիռների, դատական ակտերի, նիստերի օրերի, ժամերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, ծանուցվելու, դատական գործի ընթացքին հետեւելու, առհասարակ դատական գործընթացը մոնիթորինգ անելու նպատակով: Կայքը օգտագործելու հետ մեկտեղ, 505 հարցված քաղաքացիների մոտավորապես 1/3-ը համարում է, որ կայքը գործում է որոշ չափով դանդաղ (15%) կամ շատ դանդաղ (12%) (Տես՝ գծապատկեր 28)


Գծ. 28. ԴատաԼէքս Կայքի գործառնության արագությունը




Կայքում տեղադրված տեղեկատվության օգտակարությունը եւ կայքի քարտեզը

Ըստ հարցվողների մեծամասնության՝ կայքի գլխավոր էջին տեղադրված կայքի քարտեզը/ուղղորդող համակարգի մատչելիությունը որոշ չափով բավարար եւ լիովին բավարար է գնահատել քաղաքացիների գրեթե 77%-ը, ոչ բավարար՝ մոտավորապես 19%-ը: Կայքում տեղադրված տեղեկատվությունը օգտակար կամ շատ օգտակար է համարել քաղաքացիների 87%-ը, իսկ ոչ օգտակար՝ քաղաքացիների 13%-ը (տես Գծապատկերներ 29-30):

Գծ. 29. Կայքի գլխավոր էջին տեղադրված կայքի քարտեզը/ուղղորդող համակարգի մատչելիությունը




30. Գծ. Կայքում տեղադրված տեղեկատվության օգտակարությունը




Էլեկտրոնային հայցադիմումների ներկայացման պարզությունը եւ էլեկտրոնային հայցադիմումներ ներկայացնելու արագությունը

Էլեկտրոնային հայցադիմումներ ներկայացնելու գործընթացի արագությունը որոշ չափով արագ կամ շատ արագ է գնահատել ընդհանուր առմամբ քաղաքացիների մոտավորապես 51%-ը: Քաղաքացիների 54%-ը որոշ չափով պարզ կամ շատ պարզ է գնահատել էլեկտրոնային հայցադիմումներ ներկայացնելու ընթացակարգը: Կայքի այս հատկանիշների վերաբերյալ բացասաբար է արտահայտվել քաղաքացիների մոտավորապես 1/5-ը (տես Գծապատկերներ 31-32):

Գծ. 31. Էլեկտրոնային հայցադիմումներ ներկայացնելու ընթացակարգի պարզությունը




Գծ. 32. Էլեկտրոնային հայցադիմումներ ներկայացնելու գործընթացի արագությունը




Դիմումները առցանց ուղարկելու ընթացակարգը

Դիմումներն առցանց ուղարկելու ընթացակարգը գնահատվել է համակարգի գործառնության պարզության եւ արագության տեսանկյունից: Դիմումներն առցանց ուղարկելու ընթացակարգի պարզության վերաբերյալ դրական է արտահայտվել քաղաքացիների կեսից ավելին (դրական պատասխանների հանրագումարը՝ 57%), իսկ բացասական՝ 15%-ը, գրեթե նույն համամասնությունը նույնչափ դրական է արձագանքել համակարգի գործառնության արագության հետ կապված: Այնուամենայնիվ, քաղաքացիների 18%-ը համարում է, որ դիմումներ ուղարկելու համակարգը գործում է դանդաղ կամ շատ դանդաղ (տես Գծապատկերներ 33-34):

Գծ. 33. Դիմումները առցանց ուղարկելու ընթացակարգի պարզությունը




Գծ. 34. Դիմումներ ուղարկելու համակարգի գործառնության արագությունը




Թարմացվող տեղեկատվություն և որոնողական համակարգի հեշտություն. Գծապատկեր 35-ում կարելի է տեսնել, որ քաղաքացիների 30%-ը ընդհանուր առմամբ անբավարար է գնահատել կայքում թարմացվող տեղեկատվությունը: Հարցվողների 16%-ը որոշ չափով բարդ կամ շատ բարդ է գնահատել որոնողական համակարգը (տես Գծապատկերներ 35-36):

Գծ. 35. Թարմացվող տեղեկատվությունը




Գծ. 36. Որոնողական համակարգի հեշտությունը




Հետադարձ կապի արդյունավետությունը եւ դատական նիստերի ժամանակացույցի վերաբերյալ տրամադրվող ծանուցումները. Ըստ հարցման արդյունքների՝ քաղաքացիների մոտավորապես 1/5-ը ոչ բավարար է գնահատել Դատակէքս կայքի միջոցով դատական նիստերի ժամանակացույցի վերաբերյալ տրամադրվող ծանուցումները, հարցվողների գրեթե նույն համամասնությունը (լիովին անբավարար՝ 7%-ը եւ որոշ չափով անբավարար՝ 11%-ը) ընդհանուր առմամբ անբավարար է գնահատել հետադարձ կապի արդյունավետությունը: (տես Գծապատկերներ 37-38):

Գծ. 37. Հետադարձ կապի արդյունավետությունը



ԳՃ. 38. Դատական նիստերի ժամանակացույցի վերաբերյալ տրամադրվող ծանուցումները



ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս բաժնում ներկայացվում են մշտադիտարկման ընթացքում բացահայտված կամ դիտարկված խնդիրները, դատական համակարգի գործունեության արդյունավետությունը խոչընդոտող տեխնիկական խնդիրները եւ դրանց կարգավորման համար առաջարկությունները ըստ դիտարկված ենթառվորտների:

1. ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բացահայտված խնդիր 1

Դատական գործընթացներից ակնհայտ է, որ չնայած ձեռնարկվող գործողություններին՝ ուղղված մարդու իրավունքների իրազեկմանն ու պաշտպանությանը, ընդհանուր իրավագիտակցությունը բնակչության մեծ մասի մոտ բավականաչափ ցածր է, ինչի արդյունքում՝ դատական գործընթացներում դատավորի մասնագիտական բառապաշարը քաղաքացիների մեծ մասը չի հասկանում կամ վատ է հասկանում: Գործող օրենսդրությունը թույլ չի տալիս դատարանին/դատավորին ուղղորդել կամ բացատրական աշխատանք կատարել դատական գործընթացի կողմերի հետ, բացառություն են միայն վարչական դատավարության կարգով իրականացվող դատական նիստերը, երբ օրենսդրությունը ուղղակի նախատեսում է քաղաքացիների ուղղորդումը:

Կարգավորման առաջարկություն.

Օրենսդրական փոփոխություններով հարկավոր է սահմանել, որ կոնկրետ դեպքերում թե՛ քրեական, եւ թե՛ քաղաքացիական վարույթի գործերով դատարանը պարտավոր է նախնական բացատրական աշխատանք իրականացնել քաղաքացիների հետ մինչեւ նիստի սկսվելը կամ նիստի սկզբում: Նկատի ունենալով, որ քրեական դատավարության դեպքում խիստ հետեւում են եւ ուղարկում հուշաթերթ՝ իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ, առաջարկվում է քաղաքացիական դատավարության կարգով նույնպես սահմանել, որ դատարանը պետք է կողմերին բացատրի դատավարական իրավունքներն ու պարտականությունները:

Բացահայտված խնդիր 2

Դատարաններին առնչվող արձանագրված խնդիրներից շեշտվել է դատական նիստերի մասին պատշաճ ծանուցումների խնդիրը: Ծանուցագրերի հետ կապված առկա է երեք հիմնական խնդիր.

1. Գործերի գերակշիռ մեծամասնության դեպքում դատավորի աշխատակազմը որոշումները, ծանուցագրերը կազմվում է բավականաչափ ուշ: Դեպքեր են եղել, որ դատական նիստի հաջորդ օրը կամ մի քանի օր անց հասցեատերը ստացել է նախորդ օրվա նիստի մասին ծանուցումը:
2. Դատարանի աշխատակազմի որոշակի սխալներով կազմված դատական ծանուցագրերը չեն հանձնվում ու ետ են վերադարձվում:
3. Հայփոստ ծառայության փոստատարների կամ այլ աշխատակիցների անփույթ աշխատանքի արդյունքում ծրարները հանձնվում են այլ՝ երրորդ անձանց, համարելով, թե հասցեատերը պատշաճ իրազեկվել է:

Չնայած գործող քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսում է նաև datalex.am կայքով էլեկտրոնային ծանուցում, ծրարով նամակով ծանուցումը առաջին նիստի մասին պարտադիր է, իսկ մյուս ծանուցումները կարող են նաև թղթային չլինել, ծանուցվում են նաև դատական նիստի ընթացքում: Պրակտիկան ցույց է տվել, որ Դատալեքսի միջոցով ծանուցումն հաճախ հուսալի չէ, կայքը հաճախակի խափանվում է, պարբերաբար առկախվում է, տեղեկացնելով, որ թեսթավորվում է: ՀՀ «Քաղաքացիական դատավարության օրենսգրքի» առկա նախագծով նախատեսվում է նաև կիրառելի դարձնել էլեկտրոնային հասցեով ծանուցումը, եթե հայցվոր կողմը նշի նաև էլեկտրոնային հասցե: Սակայն էլեկտրոնային կապի ու համացանցի հասանելիությունն Հայաստանի ամբողջ տարածքում դեռ համատարած առկա չէ, իսկ որոշ խոցելի խմբերի ներկայացուցիչ քաղաքացիների հասանելիությունը համացանցին անբավարար է եւ տեղեկատվական գրագիտությունը՝ հասկանալ, թե որտեղ ինչ որոնել, ինչպես մուտք գործել նույնականացվող պետական տվյալների բազա, ցածր մակարդակի վրա:

Կարգավորման առաջարկություններ.

1. Հրատապ կերպով բարելավել datalex.am կայքը եւ աշխատանքի օպերատիվությունը: Ստեղծել կայքի վթարային կամ պահեստային աշխատանքի ապահովման մեխանիզմ՝ կրկնակ կամ կրկնօրինակ:
2. Ծրարով եւ նամակով ծանուցումների կազմման եւ հասանելիության ապահովման համար ըստ կարիքի ավելացնել դատավորների աշխատակազմի հաստիքները, ինչպես նաև սահմանել մասնագիտական նվազագույն պահանջներ այդ աշխատանքներն իրականացնողների համար:
3. Դատական դեպարտամենտին առաջարկվում է Հայփոստ ընկերության հետ ունենալ նոր եւ խիստ տուգանային պատժամիջոցներով ծառայությունների մատուցման պայմանագիր ծանուցագրերի պատշաճ առաքումների համար:

Բացահայտված խնդիր 3

Քաղաքացիների հիմնական մասը դժգոհել է դատական գործի քննության ժամկետի մեծ տեւողությունից: Հարցվածների մեծ մասի կարծիքով կամ համոզմամբ, դատական գործի քննության տեւողությունը չպետք է գերազանցի մեկ տարին:

Այս բաժնում հատկանշական է, որ որոշակիորեն տարբերվում են քրեական եւ քաղաքացիական գործերով քննության նիստերը ժամանակին սկսելու խնդիրները.

1. Քրեական գործի քննության նիստերի ուշացումների պատճառները.

- Կալանավորին քրեակատարողական հիմնարկից ուշացումով բերելը:
- Դատարանի շենքում կալանավորի սնման պայմանների բացակայությունը:
- Երբեմն ուշացող փաստաբանի մասնակցության պարտադիր լինելը:
- Դատավորի ուշ ներկայանալը նիստին: Հաճախ դա պայմանավորված է նախորդ նիստի նախատեսված տեւողության գերազանցմամբ:
- Դատախազի ուշանալը կամ բացակայությունը նիստից:
- Փորձագիտական եզրակացությունների տրամադրման ժամկետների էական խախտումներ:

- Գործի քննությանն առնչվող մասնագետների (թարգմանիչ, հոգեբան, բժիշկ եւ այլն) ուշացումները:
- Գործի քննությանն առնչվող լիցենզավորված մասնագետի բացակայությունը կամ զբաղվածությունը (ազգային փոքրամասնության լեզվից հայերեն թարգմանիչ եւ այլն):

2. Քաղաքացիական եւ վարչական գործերով քննության ուշացումների պատճառները.

- Որոշ դատավորներ նիստին նախորդող գործով նիստի ժամանակն են սխալ հաշվարկում պլանավորելիս հաջորդ նիստի սկիզբը, արդյունքում ուշ են ներկայանում դատական նիստին:
- ՀՀ վարչական գործով գործի քննության կարգով, եթե գործը քննող դատավորը տեղափոխվում է աշխատանքի այլ դատարան, ապա վերջինս մինչեւ նախորդ գործի քննության ավարտը գործուղվում է նախկին դատարան՝ գործի քննությունն ավարտելու համար: Իսկ քաղաքացիական գործով նման առանձնահատկություն չկա սահմանված, ինչի հետեւանքով դատավորը տեւական ժամանակ գործը քննելուց հետո, եթե տեղափոխվում է աշխատանքի այլ դատարան, գործի քննությունը ստանձնում է այլ դատավոր, որը սկսում է գործի քննությունը սկզբից:
- Փորձագիտական եզրակացությունների տրամադրման ժամկետների էական խախտումներ:
- Գործի քննությանն առնչվող մասնագետների (թարգմանիչ, հոգեբան, բժիշկ եւ այլն) ուշացումները:
- Գործի քննությանն առնչվող լիցենզավորված մասնագետի բացակայությունը կամ զբաղվածությունը (ազգային փոքրամասնության լեզվից հայերեն թարգմանիչ եւ այլն):

Վերոհիշյալ խնդիրները կարելի է խմբավորել այսպես.

1. Տեխնիկական խնդիրներ, որոնք կապ ունեն պլանավորման, լոգիստիկայի եւ իրավակիրառական պրակտիկայի հետ:
2. Թերացումները եւ արատավոր պրակտիկա, որոնք կապված են ուշացումների, պատասխանատվության համակարգերի չգործելու կամ դրանց անկատարության հետ: Սրանք նաեւ կոռուպցիոն ռիսկեր են պարունակում:

Կարգավորման առաջարկություններ.

1. Դատավորներին առաջարկվում է հաշվի առնելով նախընթաց փորձը, պլանավորման աշխատանքներում պահուստային ժամանակահատվածները հաշվարկել ավելի հստակորեն: Այդ աշխատանքի համար առաջարկվում է օգտագործել ժամանակակից տեղեկատվական համակարգեր, այդ թվում օնլայն օրացույցներ եւ այլն:
2. ՀՀ կառավարությանը, Արդարադատության նախարարությանը առաջարկվում է ուսումնասիրել եւ ավելացնել դատավորների թիվը՝ համապատասխան

աշխատակազմերով, այն հաշվով, որ գործերի քննությունների տեւողությունը կրճատվի եւ դառնա ողջամիտ:

3. Դատաքննություններին առնչվող պետական համակարգի պաշտոնյաների, դատավարության կողմերի եւ փաստաբանների նկատմամբ ուշացումների դեպքում օրենքով սահմանել եւ աներկբայորեն կիրառել պատասխանատվության միջոց, տուգանք:

4. Նոր նշանակվող դատավորի համար սահմանել նույն դատարանում աշխատելու առնվազն 5 տարվա պայման, իսկ դրանից հետո այլ դատարան աշխատանքի տեղափոխվելու դեպքում սահմանել նախորդ դատարանում ունեցած եւ անավարտ գործերի քննության ավարտման պարտադիր պահանջ՝ գործուղումների միջոցով:

5. Հատուկ ջանքերի եւ ֆինանսական ներդրումների միջոցով երկրում ավելացնել դատավորների թիվը 3-4 անգամ:

6. Զարգացնել տարբեր պրոֆիլների փորձագիտական ծառայությունների համակարգը, ձեւավորել փորձագիտական ծառայությունների լիցենզավորման դյուրին եւ դյուրացման մեխանիզմներ:

7. Դատարան բերվող կալանավորին սնվելու համար դատարանում նախատեսել եւ կահավորել սննդի ընդունման հարմարություններ եւ պայմաններ:

2. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բացահայտված խնդիր 1

Հանրային պաշտպանի գրասենյակում ներգրավված անձանց քանակը նվազ է այդ ծառայության կարիքն ունեցողներին բարեխիղճ եւ որակյալ օժանդակություն կամ օգնություն ցուցաբերելու համար: Աշխատանքի ծավալը մեծ է, առկա է ծանրաբեռնված կամ գերծանրաբեռնված աշխատանքային գրաֆիկ:

Կարգավորման առաջարկություններ.

1. Կարիքների բազմակողմանի ուսումնասիրման հիման վրա օրենսդրական փոփոխությունների եւ պետական բյուջեից ֆինանսավորման ավելացման միջոցով առաջարկվում է ավելացնել հանրային պաշտպանների եւ օգնականների թիվը, ապահովելով բավարար պայմաններ ՀՊ գրասենյակների աշխատանքի համար: Մասնավորաբար, այս ուսումնասիրության հիման վրա առաջարկվում է՝ յուրաքանչյուր գրասենյակում օգնականի 1 կամ 2 հաստիք ավելացնել՝ քաղաքացիներին պատշաճ որակով եւ անհրաժեշտ ժամկետում սպասարկելու համար:

2. Ավելացնել քրեական գործերով հանրային պաշտպանների թիվը:

3. Օրենսդրական փոփոխության միջոցով սահմանել ռեգրեսիվ պահանջի իրավունք հանրային պաշտպանների համար քրեական գործերով այն դեպքում, երբ պարզվում է, որ անձը ուներ բավարար ֆինանսական միջոցներ, սակայն օգտվել է անվճար փաստաբանական ծառայությունից: Այս առումով առաջարկվում է ՀՊ գրասենյակ դիմող անձանց սոցիալական կարիքավորության ստուգման մեխանիզմի ներդրում եւ այդ մեխանիզմի հասանելիություն հանրային պաշտպանների համար:

Բացահայտված խնդիր 2

Կատարված աշխատանքի դիմաց հանրային պաշտպանի վարձատրությունը ցածր են համարել հարցմանը մասնակցած հանրային պաշտպանների մեծ մասը: Դա հանգեցնում է նրան, որ հանրային պաշտպանը հետաքրքրված է այդ աշխատանքին զուգահեռ այլ աշխատանքով եւս զբաղվել 0,25% ծանրաբեռնվածությամբ:

Անհրաժեշտության դեպքում Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը կարող է ժամավճարային դրույքաչափեր նախատեսող աշխատանքային պայմանագրեր կնքել հանրային պաշտպանի գրասենյակում չընդգրկված փաստաբանների հետ, որի դեպքում փոխհատուցվող գումարի չափը սահմանվում է Երեւան քաղաքի համայնքի դատախազի աշխատանքային մեկ ժամի վարձատրության չափին համարժեք:

Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարն իր գործունեության համար ստանում է փոխհատուցում՝ հանրային պաշտպանի պաշտոնային դրույքաչափի քսանհինգ տոկոսով ավելի գումարի չափով:» «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի՝ մարզի, Երեւան քաղաքի վարչական շրջանների դատախազի եւ կայագործների զինվորական դատախազի պաշտոնային դրույքաչափը գլխավոր դատախազի պաշտոնային դրույքաչափի 75,99%-ի չափ է, փաստացի զուտ եկամուտը 320.000 դրամ է:

Կարգավորման առաջարկություններ.

Օրենսդրական փոփոխություններով եւ պետական բյուջեից ֆինանսավորման ավելացմամբ, առաջարկվում է հանրային պաշտպանների աշխատավարձը ավելացնել 50.000-100.000 դրամով:

Ի նկատի ունենալով, որ Երեւան քաղաքի դատախազը օգտվում է պետական աջակցությունից (սոցիալական փաթեթից, ստանում է հավելումներ), առաջարկվում է նախատեսել նման լրացուցիչ սոցիալական եւ ֆինանսական աջակցության տրամադրում նաեւ հանրային պաշտպաններին:

Բացահայտված խնդիր 3

Հանրային պաշտպանների հետ հարցման արդյունքներում մատնանշվել են նաեւ հարցվողների մասնագիտական կարողությունների կատարելագործման կարիքները: Ըստ հանրային պաշտպանների, նրանք, բացի մասնագիտական վերապատրաստումները, որոնք իրականացնում է Փաստաբանական պալատը, կարիք ունեն անցկերեն լեզվի դասընթացների եւ նեղ պրոֆիլային վերապատրաստումների: Մասնագիտական կարողությունների զարգացմանն ուղղված դասընթացները գերակշիռ մեծամասնությամբ անցկացվում են առկա տարբերակով՝ Երեւանում, բայց շատ մարզային մասնագետներ հնարավորություն չեն ունենում մասնակցելու այդ վերապատրաստումներին՝ ժամանակի եւ ֆինանսական խնդիրների պատճառով:

Կարգավորման առաջարկություն.

Պետական, բյուջետային աջակցությամբ ապահովել հանրային պաշտպանների պարբերական վերապատրաստումներ հետեյալ թեմաներով. անգլերեն՝ գրավոր և բանավոր, հոգեբանություն, ընտանեկան բռնություն, գենդերային բռնություն, հաղորդակցման հմտություններ թիրախ խմբերի հետ, հանրային պաշտպանների ձեռնահասություն ու հասանելիություն: Վերապատրաստումների մեծ մասը առաջարկվում է կազմակերպել նաև հեռավար: Առերես վերապատրաստումների համար առաջարկվում է այլ բնակավայրերից դրանց մասնակցող հանրային պաշտպանների համար ապահովել ողջամիտ ճանապարհաձախս և օրապահիկ:

Բացահայտված խնդիր 4

Գրադարանների ու անհրաժեշտ քանակով համակարգիչների և տպիչների առկայության փաստն արձանագրվել է Հանրային պաշտպանների միայն փոքրաթիվ մարզային գրասենյակներում: Ճիշտ այդպես, միայն որոշ գրասենյակներ են ունեցել բավարար սանիտարական պայմաններ ու օդափոխման համակարգեր:

Կարգավորման առաջարկություն.

ՀՊ գրասենյակների կանոնավոր գործունեության համար առաջարկվում է պետական բյուջեից նպատակային ֆինանսավորմամբ ապահովել բավարար և համահավասար տեխնիկական պայմաններ հանրային պաշտպանների մարզային գրասենյակներին:

3. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բացահայտված խնդիր 1.

Տեխնիկական, կոմունալ պայմանների անբավարարություն: Դիտարկում իրականացված դատարանների գերակշիռ մեծամասնությունում բացահայտվել են հետեյալ խնդիրները՝

- Բացակայում է հանրամատչելի սանհանգույցը կամ գտնվում է անմխիթար վիճակում:
- Առկա չէ ավտոկայանատեղի կամ դրանք բաց տարածքում են:
- Բացակայում է հանդերձարան դատավորների համար, դրանք առկա են իրենց սենյակներում՝ փակ տարածքներում:
- Առկա չէ սպասասրահ:
- Դատարաններում առկա անսարք առարկաների և լամպերի նորոգման հարցերը չեն լուծվում, ինչը բերում է լուսավորության պակասի, հաղորդակցության միջոցների անապահովություն:
- Բացակայում է ճաշարան:

Կարգավորման առաջարկություններ.

Դատարանների կանոնավոր և անխափան գործունեության համար անհետաձգելիորեն անհրաժեշտ է ապահովել ենթակառուցվածքների նորոգում, կառուցում, գործարկում, վերագործարկում: Առաջարկվում է ՀՀ

կառավարությանը բյուջետային միջոցներից հոգալ այդ ծախսերը եւ պատվիրել այդ աշխատանքները:

Սանհանգույցից պատշաճ օգտվելու պայմանների պահպանման համար առաջարկվում է ներդնել խելացի լուծումներ, օրինակ. մինչեւ գուգարանակոնքի լվացման ջուրը չմիացնեն, գուգարանի դուռը չբացվի, եւ այլն:

Բացահայտված խնդիր 2.

Արտակարգ տարհանումների պլանի թերություն: Դատարանների մեծ մասում շենքի եւ սենյակների քարտեզներ, ինչպես նաեւ տարհանման պլան չկա հրապարակված: Տարհանման պլանի առկայությունը կենսական նշանակություն ունի բնական եւ մարդածին աղետներից պատսպարվելու համար:

Կարգավորման առաջարկություն.

Քաղաքացիների ուղղորդման արագության եւ անհրաժեշտության դեպքում տարհանում իրականացնելու համար առաջարկվում է դատարանում ունենալ հարկերի, սենյակների, միջանցքների եւ այլ ենթակառուցվածքների քարտեզ՝ պլան, որտեղ կգետեղվեն նաեւ ազատ եւ փակ տարածքները, ապաստարանները, սանհանգույցները, տարհանման ճանապարհները, հրշեջ հանգույցի կետերը եւ այլն:

4. ԴԱՏԱԼԵՔՍ ԿԱՅՔԻ ԱՐՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Բացահայտված խնդիր 1.

Դատալեքս կայքի հիմնական խնդիրներից են՝ արագության նվազությունը, որոնման համակարգի բարդությունը, էլեկտրոնային դիմումների, հայցադիմումների ներկայացման բարդությունը, մի շարք արժեքավոր տեղեկությունների բացակայությունը, թարմացման դանդաղումն ու հետադարձ կապի բացակայությունը:

Կարգավորման առաջարկություններ.

1. Առաջարկվում է կայքը վերակառուցման եւ թարմանցման համար պետական ներդրումներ իրականացնել այն հաշվով, որ շահառուները, օգտվողները հեշտությամբ եւ արագորեն կարողանան օգտվել կայքի ծառայություններից:
2. Առաջարկվում է կայքում ներառել կամ ավելացնել էլեկտրոնային հայցադիմումների, դիմումների գործուն միջոցառումների բաժիններ, որոնց առկայության պարագայում նաեւ գործընթացները կարագանան:
3. Առաջարկվում է Դատալեքս կայքում ավելացնել Արբիտրաժային դատարանի գործերը, վճիռները եւ որոշումները, որոնք որեւէ տեղ չեն արտացոլվում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս զեկույցը կազմվել է այն ենթադրությամբ, որ դատարանների եւ արդարադատությանն առնչվող այլ հաստատությունների, համակարգերի եւ խմբերի կարծիքների մշտադիտարկման հիման վրա բացահայտվեն անհետաձգելի խնդիրները եւ խոչընդոտները, որոնց կարգավորումներն ու լուծումները կհանգեցնեն արդարադատությանը դիմող անձանց կարիքների ավելի արդյունավետ լուծումների: Մշտադիտարկման այս զեկույցը շոշափում է քաղաքացիների վերաբերմունքը արդարադատության համակարգին, արդարադատության հաստատությունների տեխնիկական խնդիրները եւ բարդությունները, հանրային պաշտպանների աշխատանքային պայմանները եւ կարիքները, Դատալեքս կայքի գործունեության որակն ու թերությունները: Ձեկույցի վերջնամասում համառոտագրվել են բացահայտված խնդիրները եւ արվում են դրանց լուծումների իրատեսական առաջարկություններ:

Մշտադիտարկման ընթացքում աշխատանքային թիմը սերտ կապի մեջ է եղել փաստաբանական եւ իրավապաշտպան հանրույթի հետ: Ցավոք, հիմնական թիրախ խմբերից մեկը՝ դատավորական հանրույթը, հիմնականում անհատորդ մնաց մշտադիտարկման խմբի դիմումներին եւ կոչերին՝ ժամանակ հատկացնել եւ անստորագիր հարցազրույցով մասնակցել արդարադատության իրականացման տեխնիկական խոչընդոտների իրենց պատկերացումների ուսումնասիրմանը:

Ձեկույցի նախնական տարբերակի շուրջ անցկացվել է չորս շահագրգիռ քննարկում շահագրգիռ խմբերի մասնակցությամբ (լրագրողներ, իրավաբաններ, հանրային պաշտպաններ, փաստաբաններ եւ այլք), ապա հաշվի առնելով նաեւ Եվրասիա համագործակցություն հիմնադրամի մասնագետների դիտողությունները, արժեքավոր լրացումներ են արվել խնդիրների կարգավորման առաջարկությունների բաժնում: Ձեկույցի վերջնամշակված տարբերակը ներկայացվում է լայն հասարակությանը, ուսումնասիրված հաստատություններին, դատավորներին, դատական դեպարտամենտին, Բարձրագույն դատական խորհրդին, ՀՀ Փաստաբանական պալատին, ՀՀ արդարադատության նախարարությանը, ԱԺ պետական եւ իրավական հարցերի հանձնաժողովին՝ ի գիտություն եւ ի կոչ՝ լուծելու բացահայտված խնդիրները:

ՄՇՏԱՂԻՏԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Այս մշտադիտարկումն իրականացվել է ծրագրի մշտադիտարկման մասնագետ, սոցիոլոգ Աննա Մալխասյանի մշակած մեթոդաբանության հիման վրա:

Ծրագրի իրավախորհրդատուն Փաստաբանների պալատի անդամ Գայանե Գեւորգյանն է:

Մշտադիտարկման դաշտային աշխատանքները՝ հարցումները եւ դիտարկումները դատարաններում ու հանրային պաշտպանների գրասենյակներում ու աշխատասենյակներում իրականացրել են Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպության մարզային քաղաքացիական երիտասարդական կենտրոնների եւ այլ բնակավայրերի ակտիվ երիտասարդները:

Ծրագրի ղեկավարն է Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանը:

«Ասպարեզ» Ակումբն այս մշտադիտարկմանը դրամաշնորհային աջակցության համար շնորհակալություն է հայտնում Եվրասիա համագործակցություն հիմնադրամին եւ Շվեդիայի միջազգային զարգացման գործակալությանը՝ Սիդային:

Այս զեկույցի հետ կապված հարցերով կարելի է դիմել Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ. Գյումրի, Պուշկինի 96, հեռախոս 091821363, էլ. հասցե. levon@asparez.am:

Հավելվածներ.

Հավելված 1.

Նամակ ՀՀ արդարադատության նախարարին

13 դեկտեմբերի, 2021թ.

ՀՀ Արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանին

Հարգելի պարոն Անդրեասյան,

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբ հասարակական կազմակերպությունը Եվրասիա համագործակցության հիմնադրամի աջակցությամբ «Մարդը կարիքի մեջ» ծրագրի շրջանակներում իրականացնում է «Արդարադատության համակարգի մոնիթորինգ» դրամաշնորհային ծրագիրը:

Ծրագրի նպատակն է իրականացնել դատական համակարգի՝ արդարադատության գործընթացի **տեխնիկական մասի** մշտադիտարկում, որի շրջանակներում անհրաժեշտ է կատարել դատական/արդարադատության համակարգի հետ առնչվող անձանց աշխատանքային ծանրաբեռնվածության, աշխատանքային պայմանների, գույքային ապահովման, դատական նիստերի ժամանակացույցի եւ հարակից գործընթացների մշտադիտարկում: Կուսումնասիրվի նաեւ ավելի քան 500 քաղաքացու կարծիք արդարադատության տեխնիկական ապահովման մասին: Մշտադիտարկման արդյունքում կկազմվի զեկույց, որում կներառվեն հնարավոր բացահայտումները եւ բացահայտված խնդիրների կարգավորման առաջարկությունները: Ձեկույցը կներկայացվի ինչպես Ձեզ, այնպես էլ մշտադիտարկման թիրախ խմբերի ներկայացուցիչներին:

Այդ կապակցությամբ ակնկալում ենք Ձեր աջակցությունը համապատասխան հանձնարարականների տեսքով՝ ծրագրի շրջանակներում թիրախ տարածքներում (Շիրակ, Լոռի, Տավուշ, Սյունիք, Վայոց Ձոր, Արմավիր մարզեր եւ Երեւան քաղաք) առանց խոչընդոտի արդարադատության համակարգի տեխնիկական բաղադրիչի խնդիրների մշտադիտարկման համար:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ

Լեւոն Բարսեղյան _____

Հավելված 2.

13 դեկտեմբերի, 2021թ.

ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանին

Հարգելի պարոն Բաբայան,

Ժուռնալիստների «Ասպարեզ» Ակումբ հասարակական կազմակերպությունը Եվրասիա համագործակցության հիմնադրամի աջակցությամբ «Մարդը կարիքի մեջ» ծրագրի շրջանակներում իրականացնում է «Արդարադատության համակարգի մոնիթորինգ» դրամաշնորհային ծրագիրը: Ծրագրի նպատակն է իրականացնել դատական համակարգի արդարադատության գործընթացի **տեխնիկական մասի** մշտադիտարկում, որի շրջանակներում անհրաժեշտ է կատարել դատական/արդարադատության համակարգի հետ առնչվող անձանց, այդ թվում նաև փաստաբանների, աշխատանքային ծանրաբեռնվածության, աշխատանքային պայմանների, գույքային ապահովման, դատական նիստերի ժամանակացույցի եւ հարակից գործընթացների մշտադիտարկում: Կուսումնասիրվի նաև ավելի քան 500 քաղաքացու կարծիք արդարադատության տեխնիկական ապահովման մասին: Մշտադիտարկման արդյունքում կկազմվի զեկույց, որում կներառվեն հնարավոր բացահայտումները եւ բացահայտված խնդիրների կարգավորման առաջարկությունները: Զեկույցը կներկայացվի ինչպես Ձեզ, այնպես էլ մշտադիտարկման թիրախ խմբերի ներկայացուցիչներին:

Ծրագրի արդյունավետության ապահովման համար խնդրում եմ տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Բ^ոնչ իրավական ակտերով են կարգավորվում հանրային պաշտպանի գրասենյակների հարմարությունները, կահավորումը, աշխատանքի կարգավորումները, եթե կան այդպիսի կարգավորումներ:
2. Բ^ոնչ աշխատակազմ է գործում հանրային պաշտպանի գրասենյակներում, քանի՞ հոգուց են բաղկացած, ինչպիսի՞ն է նրանց աշխարհագրական բաշխումը:
3. Բ^ոնչ կարգով է որոշվում ու կատարվում գործերի բաշխումը հանրային պաշտպաններին, ինչպիսի՞ն է հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ

Կանխավ շնորհակալությամբ՝ Լեւոն Բարսեղյան _____

Հավելված 3.

Հարցաթերթեր

Հարցաթերթի համար 1

Հարգելի հարցվող,

Այս հարցումն իրականացնում է Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի մշտադիտարկումային թիմը «Արդյունավետ դատական արտադրության ապահովում» ծրագրի շրջանակներում: Ձեր պատասխանները կօգնեն մշտադիտարկումն ավելի ներառական դարձնել, ինչը կնպաստի Հայաստանում դատական համակարգի տեխնիկական ապահովման բարելավման առաջարկների մշակմանը եւ ներկայացմանը ՀՀ իշխանություններին: Այս ծրագրով ուսումնասիրվում է ոչ թե արդարադատության որակը երկրում, այլ արդարադատության համակարգի աշխատանքային պայմանները: **Հարցումն անստորագիր է:**

Հանրային պաշտպանի գրասենյակի հարմարավետությունը

ԴԻՏՈՐԴԻՆ. ԱՅՍ ՀԱՐՑԵՐԸ ՃՇԳՐՏԵԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՏ: ՀԱՐՑՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ՄԵԿ ԱՆԳԱՄ:

Q2. Գործունեության վայր

1. Մարզ _____ 2. Քաղաք _____
 3. Գրասենյակի հասցե _____

Q3.1. Արդյո՞ք գրասենյակում առկա է պաշտպանի առանձնասենյակ:	1. Այո	2. Ոչ	Դիտորդի մեկնաբանությունը
Q3.2. Արդյո՞ք գրասենյակում առկա է մասնագիտական գրադարան:	1. Այո	2. Ոչ	Դիտորդի մեկնաբանությունը
Q3.3. Արդյո՞ք գրասենյակում առկա են անհրաժեշտ քանակի համակարգիչներ եւ տպիչներ:	1. Այո	2. Ոչ	Դիտորդի մեկնաբանությունը
Q3.4. Արդյո՞ք գրասենյակում առկա է օդափոխման համակարգ:	1. Այո	2. Ոչ	Դիտորդի մեկնաբանությունը
Q3.5. Արդյո՞ք գրասենյակում առկա է ջեռուցման համակարգ:	1. Այո	2. Ոչ	Դիտորդի մեկնաբանությունը

Q3.6. Արդյո՞ք գրասենյակի սանհանգույցը մաքուր է եւ հազեցած է անհրաժեշտ պարագաներով:	1.Այո	2.Ոչ	Դիտորդի մեկնաբանությունը
Այլ մեկնաբանություններ՝			

Հարցվողի հեռախոսահամարը՝ _____

(Խնդրում եմ նշել, որ հեռախոսահամարը անհրաժեշտ է միայն Ձեր աշխատանքի որակը ստուգելու համար եւ որեւէ կերպ չի օգտագործվելու հարցվողի նույնականացման համար)

Հարցազրուցավարի անուն, ազգանուն _____

Ամսաթիվ _____

Հարցաթերթ համար 2

Հարգելի հարցվող,

Այս հարցումն իրականացնում է Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի մշտադիտարկումային թիմը «Արդյունավետ դատական արտադրության ապահովում» ծրագրի շրջանակներում: Ձեր պատասխանները կօգնեն մշտադիտարկումն ավելի ներառական դարձնել, ինչը կնպաստի Հայաստանում դատական համակարգի տեխնիկական ապահովման բարելավման առաջարկների մշակմանը եւ ներկայացմանը ՀՀ իշխանություններին: Այս ծրագրով ուսումնասիրվում է ոչ թե արդարադատության որակը երկրում, այլ արդարադատության համակարգի աշխատանքային պայմանները: Հարցումն անստորագիր է:

ԴՍՏԱՐԱՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ

Հարցազրուցավարին. 77. Հրաժարվում եմ պատասխանել, 99.Դժվարանում եմ պատասխանել, 88.Կիրառելի չէ/66.Չեմ առնչվել տարբերակները բարձրաձայն չկարդալ:

ՄԱՍ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Q1. Հարցվողի սեռ

1. Իգական
2. Արական

Q2. Հարցվողի տարիք _____

Q3. Հարցվողի կրթություն

1. Թերի միջնակարգ
2. Միջնակարգ
3. Միջին մասնագիտական
4. Թերի բարձրագույն

5. Ուսանող
6. Բարձրագույն
7. Հետբուհական
8. Այլ_____

77. Հրաժարվում եմ պատասխանել

Q4. Զբաղվածություն (հնարավոր է մի քանի պատասխան)

1. Գործազուրկ
2. Անաշխատունակ
3. Տնային տնտեսուհի
4. Ուսանող
5. Ինքնազբաղված/ձեռներեց
6. Մասնագետ մասնավոր ոլորտում
7. Մասնագետ պետական ոլորտում
8. Մասնագետ քաղաքացիական հասարակության ոլորտում
9. Ղեկավար մասնավոր ոլորտում
10. Ղեկավար պետական ոլորտում
11. Ղեկավար քաղաքացիական հասարակության ոլորտում
12. Այլ_____

77. Հրաժարվում եմ պատասխանել

Q5. Հարցվողի փաստացի բնակության վայր

1. Մարզ_____ 2. Քաղաք _____

Q6. Հարցվողի դատական կարգավիճակը

- | | |
|----------------|----------------------|
| 1. Հայցվոր | 6. Ամբաստանյալ |
| 2. Պատասխանող | 7. Հանրային պաշտպան |
| 3. Երրորդ անձ | 8. Վկա |
| 4. Փաստաբան | 9. Փորձագետ/մասնագետ |
| 5. Պետմեղադրող | 10. Այլ_____ |

Q7. Գործը քննող դատական ատյանը

1. Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան
2. Սնանկության դատարան
3. Վարչական դատարան
4. Վերաքննիչ դատարան

Q8. Դատական ատյանի գտնվելու վայրը

1. Մարզ_____ 2. Քաղաք _____

3. Դատարանի հասցե_____

Q9. Դատական գործի տեսակը

1. Վարչական
2. Քրեական

3. Քաղաքացիական
4. Սնանկության
5. Այլ _____

77. Հրաժարվում եմ պատասխանել

Q10. Նշեք Ձեր գործը քննող դատավորի սեռը _____

Q11. Նշեք դատավորի անուն, ազգանունը _____

ՄԱՍ II. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Q12. Օգտագործելով 1-ից 4 բալանոց սանդղակ, գնահատեք Ձեր գործը քննող դատավորի/ դատական կազմի հետևյալ հատկանիշները:					
Հատկանիշներ	1-ը՝ լիովին անբավարար	2-ը՝ հիմնականում բավարարված չեմ	3-ը՝ հիմնականում բավարարված եմ	4-ը՝ լիովին բավարարված եմ	99.ԴՊ. 88.Կիրառ. չէ 66. Չեմ առնչվել
